

# ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Միջազգային գիտաժողով  
նվիրված Սարդարապատի հուշահամալիրի 55-ամյակին և  
Հայոց ազգագրության թանգարանի 45-ամյակին


## ВОПРОСЫ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ, ИДЕНТИЧНОСТИ

Международная конференция  
посвященная 55-летию Сардарapatского мемориального  
комплекса и 45-летию Этнографического музея армян

## ISSUES OF ARMENIAN CULTURE, IDENTITY

International scientific conference

Dedicated to the 55th anniversary of the opening of Sardarapat Memorial Complex  
and the 45th anniversary of the Museum of Armenian Ethnography



**13 մայիսի \* 13 мая \* 13 May - 2023**

**Սարդարապատ-Երևան \* Сардарapat-Ереван \* Sardarapat-Yerevan**

## ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

### ԿԱՐԵՆ ՓԱԿԼԵՎԱՆՅԱՆ

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի տնօրեն, պատմ.գիտ. թեկնածու, դոցենտ, *կազմկոմիտեի համանախագահ*

### ԱՐՍԵՆ ԲՈՐՈՒՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) տնօրեն, պատմ.գիտ. թեկնածու, *կազմկոմիտեի համանախագահ*

### ՍՎԵՏԼԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայոց ազգագրության թանգարանի (ՀԱԹ) գիտական գծով փոխտնօրեն, ՀԱԻ ավագ գիտաշխատող, պատմ.գիտ. թեկնածու, *կազմկոմիտեի պատասխանատու քարտուղար*

### ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն, բանասիրական գիտ. թեկնածու, *պատասխանատու քարտուղար*

### ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ

ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

### ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր

### ԵՐԱՆՈՒՀԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետի տեղակալ, պատմ. գիտ. թեկնածու

### ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, էթնոսոցիոլոգիայի բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր

### ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր

### ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր

### ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր

### ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու

## ОРГКОМИТЕТ

### **КАРЕН ПАХЛЕВАНЯН**

Директор Мемориального комплекса Сардарapatской битвы, Национального музея этнографии и истории освободительной борьбы армян (МЭА), канд. ист. наук, доцент, *сопредседатель оргкомитета*

### **АРСЕН БОБОХЯН**

Директор Института археологии и этнографии (ИАЭ) НАН РА, канд. ист. наук, *сопредседатель оргкомитета*

### **СВЕТЛАНА ПОГОСЯН**

Замдиректора МЭА, старший научный сотрудник (ИАЭ), канд. ист. наук, *ответственный секретарь оргкомитета*

### **ТОРК ДАЛАЛЯН**

Замдиректора Института археологии и этнографии НАН РА, канд. фил. наук, *ответственный секретарь оргкомитета*

### **АШОТ ПИЛИПОСЯН**

Зав. кафедрой Истории Армении АГПУ, Служба по Охране Исторической Среды и Историко-культурных Музеев-заповедников, доктор ист. наук, профессор

### **РУБЕН КАРАПЕТЯН**

Институт археологии и этнографии НАН РА, заведующий отделом исследований диаспоры, доктор ист. наук

### **ЕРАНУИ МАРГАРЯН**

Министерство ОНКС РА, замначальника департамента Культурного наследия и народных промыслов, канд. ист. наук

### **МИГРАН ГАЛСТЯН**

Ведущий научный сотрудник, зав. отделом этносоциологии Института археологии и этнографии, доктор ист. наук

### **САМВЕЛ МКРТЧЯН**

Старший научный сотрудник Института археологии и этнографии, доктор ист. наук

### **АЙК АВЕТИСЯН**

Завкафедрой археологии и этнографии факультета истории ЕГУ, доктор исторических наук, профессор

### **ЕРВАНД ГРЕКЯН**

Ведущий научный сотрудник Института археологии и этнографии, доктор исторических наук

### **АСМИК АРУТЮНЯН**

Доцент кафедры археологии и этнографии ЕГУ, кандидат исторических наук

## ORGCOMMITEE

### **KAREN PAHLEVANYAN**

Director of the Memorial Complex of Sardarapat Battle, National Museum of Armenian Ethnography and History of Liberal Struggle (MEA), Ph.D, associate professor, *co-president of the orgcommittee*

### **ARSEN BOBOKHYAN**

Director of the Institute of Archeology and Ethnography (IAE), NAS RA, Ph.D, *co-president of the orgcommittee*

### **SVETLANA POGHOSYAN**

Deputy Director of the Museum of Armenian Ethnography, Ph.D, Senior researcher of the IAE, *responsible secretary of the orgcommittee*

### **TORQ DALALYAN**

Deputy Director of the Institute of Archeology and Ethnography, Ph.D in Philology, *responsible secretary of the orgcommitee*

### **ASHOT PILIPOSYAN**

Head of Chair of the History of Armenia ASPU, Department of Armenian History, Service for the Protection of the Historical Environment and Historical and Cultural Museums-Reserves, doctor-professor

### **RUBEN KARAPETYAN**

Department Head of Diaspora Studies, IAE NAS RA Doctor of Historical Sciences

### **YERANUHI MARGARYAN**

Ministry of the ESCS RA, Deputy Head of Department of Cultural Heritage and Folk Crafts, Ph.D

### **MIGRAN GALSYAN**

Leading Scholar, Department Head of the Ethnosociology of the Institute of Archaeology and Ethnography, Doctor of Historical Sciences

### **SAMVEL MKRTCHYAN**

Senior researcher of the Institute of Archeology and Ethnography, Doctor of Historical Sciences

### **HAYK AVETISYAN**

Department Head of Archaeology and Ethnography of Yerevan State University, Faculty of History, Doctor of Historical Sciences, professor

### **YERVAND GREKYAN**

Leading Scholar of the Institute of Archaeology and Ethnography, Doctor of Historical Sciences

### **HASMIK HARUTYUNYAN**

Associate professor of the Chair of Archeology and Ethnography YSU, Ph. D

## ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԾՐԱԳԻՐ

10:00-10:30 - ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

10:30-11:00 - ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Կարեն Փահլևանյան Թանգարանի տնօրեն

Արսեն Բոբոխյան Ինստիտուտի տնօրեն

### ԵԼՈՒՅԹՆԵՐ

Լևոն Աբրահամյան ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Մշակութային մարդաբանության բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ թղթակից անդամ

Տորք Դալալյան ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, գիտ. գծով փոխտնօրեն, բանասիրական գիտ. թեկնածու

Սուրեն Հոբոսյան ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Ազգագրության բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու

## ПРОГРАММА КОНФЕРЕНЦИИ

10:00-10:30 - РЕГИСТРАЦИЯ

10:30-11:00 - ВСТУПИТЕЛЬНОЕ СЛОВО

Карен Пахлеванян Директор музея

Арсен Бобохян Директор Института

### ВЫСТУПЛЕНИЯ

Левон Абраамян ИАЭ НАН РА, зав. отделом Культурной Антропологии, канд. ист. наук, член-корреспондент НАН

Торк Далалян Замдиректора ИАЭ НАН РА, канд. фил. наук

Сурен Обосян ИАЭ НАН РА, зав. отделом этнографии, канд. ист. наук

## CONFERENCE PROGRAM

10:00-10:30 - REGISTRATION

10:30-11:00 - OPENING SPEECH

Karen Pahlevanyan Museum Director

Arsen Bobokhyan Institute Director

### SPEECHES

Levon Abrahamian IAE NAS RA, Department Head of Cultural Anthropology, Ph.D, corresponding member of NAS

Torq Dalalyan Deputy Director of the IAE NAS RA, Ph.D in Philology

Suren Hobosyan IAE NAS RA, Department Head of Ethnography, Ph.D

## ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ \* ПЛЕНАРНОЕ ЗАСЕДАНИЕ \* PLENARY SESSION

11:00 - 12:00

### Աշոտ Փիլիպոսյան

Հայկական լեռնաշխարհը հին մերձավոր արեվելքի ռազմաքաղաքական և առևտրա-տնտեսական գործընթացների ոլորտում (մ.թ.ա. II հազ. երկրորդ կես)

### Անուշ Տեր-Մինասյան

Հայկական միջնադարյան ճարտարապետությունը՝ որպես ժողովրդի ինքնության գրավականներից մեկը

### Սուսան Հարությունյան

Արա Հարությունյանի ստեղծագործությունը ժամանակակից հայ ինքնության հիմքում

## ՍՈՒՐՃԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ \* КОФЕ- БРЕЙК \* COFFEE BREAK

12:00 - 12:30

## ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՆԻՍՏԵՐ

I մասնաճյուղ - ԱԶԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համանախագահներ՝

Սվետլանա Պողոսյան, ՀԱԹ գիտ. գծով փոխտնօրեն, պ.գ.թ.

Տորք Դալալյան, ՀԱԻ գիտ. գծով փոխտնօրեն, պ.գ.թ.

## СЕКЦИОННЫЕ ЗАСЕДАНИЯ КОНФЕРЕНЦИИ

I секция - ЭТНОЛОГИЯ, ФОЛЬКЛОРИСТИКА, АРХЕОЛОГИЯ

Сопредседатели:

Светлана Погосян - Замдиректора МЭА, канд. ист. наук

Торк Далалян - Замдиректора ИАЭ НАН РА, канд. фил. наук

## BRANCH SITTINGS OF THE CONFERENCE

I branch - ETHNOLOGY, FOLKLORE STUDIES, ARCHEOLOGY

Co-presidents

Svetlana Poghosyan - Deputy Director of the EMA, Ph.D

Torq Dalalyan - Deputy Director of the IAE NAS RA, Ph.D in Philology

12:30-12:45	<b>Սվետլանա Պողոսյան</b>	Հայոց ազգագրության թանգարանը հայկական մշակույթի և ազգային ինքնության տաճար
12:45-13:00	<b>Թամար Հայրապետյան</b>	Գարեգին Սրվանձտյանցի ժողովրդագիտական գործունեությունը
13:00-13:15	<b>Յակոբ Չոլաքեան</b>	Սուրիոյ հայկական յուշակոթողները
13:15-13:30	<b>Արմեն Սարգսյան</b>	Ժողովրդական հավատալիքային դրսևորումների մեր գրառումները
13:30-13:45	<b>Անդրանիկ Տագետեան</b>	Երուսաղէմի, XIX դարու Վանի եւ XVIII դարու հայ պղնձագործութեան եւ պղնձագործներուն վերաբերող երեք հարցում ու պատասխան
13:45-14:00	<b>Լևոն Պետրոսյան</b>	Անդրադարձ Շիրակավանի յոթ դամբարաններին
14:00-14:15	<b>Ինեսա Կարապետյան</b>	Արմավիրի անտիկ դարաշրջանի կարասային թաղումները
14:15-14:30	<b>Մատեուշ Իսկրա</b>	Հայ-լեհական հնագիտական համագործակցության 10-ամյակը. գիտական, մշակութային ձեռքբերումներ և հետագա հեռանկարներ: Mateusz Iskra 10th anniversary of armenian-polish archaeological collaboration. scientific, cultural achievements and further perspectives
14:30-14:45	<b>Հասմիկ Գալստյան</b>	Համագործակցությունը հայոց կաթնասունտեսության մշակույթում
14:45-15:00	<b>Հասմիկ Հարությունյան</b>	Ժողովրդական ուխտավայրերը Կապանում, ըստ Արտաշես Ծատուրյանի ազգագրական նյութերի
15:00-15:15	<b>Գևորգ Գյուլումյան</b>	Գարդմանի (Հյուսիսային Արցախ) աղբյուրները և դրանց առնչվող ավանդագրույցները
15:15-15:30	<b>Կարեն Հովհաննիսյան</b>	Կողբ գյուղի սրբավայրերը և ուխտագնացությունները
15:30-15:45	<b>Լիլիթ Սկրտումյան</b>	Արջը հեքիաթներում և ավանդագրույցներում
15:45-16:00	<b>Նարինե Շամամյան</b>	Ռազմապարերը հայոց ազատագրական պայքարում
16:00-16:15	<b>Նոնա Շահնազարյան</b>	Տունը և հայրենիքը Ռուսաստանի հայ համայնքների ինքնություններում: Дом и родина в идентичностях армянских сообществ в России
16:15-16:30	<b>Ռաֆիկ Գաբրիելյան</b>	Լանդշաֆտի յուրացման եղանակները ինքնության համատեքստում
16: 30-16:45	<b>Վարդիթեր Մադաթյան</b>	Ընտանիքը Տավուշում XIX դարում մինչև 1870-ական թվականները, XX դարի սկզբին, գյուղական համայնքի համատեքստում (ըստ Հայաստանի ազգային արխիվի նյութերի)
16:45-17:00	<b>Սուսաննա Ադամյան</b>	Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալյանցի հայապահպան գործունեությունը
17:00-17:15	<b>Սիրանույշ Առաքելյան</b>	Թոնիիրը հայ ավանդության մեջ
17:15-17:30	<b>Հայարփի Անանյան</b>	Կասկադ համալիրը որպես ավանդական պարի փոխանցման և պահպանման միջավայր
17:30-17:45	<b>Անժելա Ամիրխանյան</b>	Քաղցրավենիքի մշակույթը հայոց ուտեստի համակարգում (ավանդույթ և արդիականություն)
17:45-18:00	<b>Օաննա Հարոյան</b>	Տոնաձիսական ուտեստը Շիրակում

## II մասնաճյուղ – ԹԱՆԳԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համանախագահներ՝

**Գալյա Դավիդովա**, Հայոց ազգագրության թանգարան, բաժնի վարիչ  
**Աշխունջ Պողոսյան**, Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն, փորձագետ, պ.գ.թ.

### II секция – МУЗЕЕВЕДЕНИЕ

Сопредседатели:

**Гая Давыдова** - Музей этнографии армян, зав. отделом  
**Ашхундж Погосян** - Экспертный центр культурных ценностей, эксперт, канд. исторических наук

### II branch - MUSEOLOGY

Co-presidents

**Galya Davydova** - Museum of Armenian ethnography, Head of Department  
**Ashkhunj Poghosyan** - Expert Center of Cultural Values, expert, Ph.D in history

12:30-12:45	<b>Արևիկ Մելիքյան</b>	Պատմություններ Սարդարապատի հուշահամալիրի կառուցման մասին
12:45-13:00	<b>Սամվել Ռամազյան</b>	Վլադիմիր Սակկիլարի. հայ ժողովրդի հույն զավակը
13:00-13:15	<b>Արմինե Շահբազյան</b>	Դավիթ Բեկի կերպարի ներկայացումը դպրոցական համակարգում
13:15-13:30	<b>Գրիգոր Աղանյան</b>	Չիֆթալարյանների տոհմը որպես կարևոր գինագործության ավանդույթների կրող
13.30-13.45	<b>Ալվարո Գրիգորյան</b>	Հայոց ազգագրության ազգային թանգարանի մշակութակրթական գործունեությունը 1978-2004թթ.
13:45-14:00	<b>Լիաննա Գևորգյան</b>	Թանգարանի «տպավորությունների գիրքը» որպես գիտական ուսումնասիրությունների սկզբնաղբյուր (ըստ «Հայոց ազգագրության թանգարան»-ի նյութերի)
14:00-14:15	<b>Սվետլա Դիմիտրովա</b>	Թանգարաններ բաց երկնքի տակ հետսոցիալիստական շրջանում (բուլղարական փորձ)
14:15-14:30	<b>Աշխունջ Պողոսյան</b>	Վասպուրականի գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերի տիպերը /XIX-XX դ. սկիզբ/
14:30-14:45	<b>Գալյա Դավիդովա</b>	Բարսեղ Թուղլաճյանի հավաքածուի պատմամշակութային արժեքը
14:45-15:00	<b>Կարինե Բազեյան</b>	Հայոց ազգագրության թանգարանի խաչկար ասեղնագործությունների հավաքածու
15:00-15:15	<b>Կարինե Երիցյան</b>	Հազարաշեն տանիքներով ժողովրդական տների հուշարձանացումը խորհրդային և հետխորհրդային Հայաստանում



15:15-15:30	<b>Վիկտորյա Մուրադյան</b>	Հայ ժողովրդական էպոսի դրսևորումները Հայոց ազգագրության թանգարանի հավաքածուներում
15:30-15:45	<b>Մանե Խաչատրյան</b>	Մշակույթի խնդիրները Հայաստանում
15:45-16:00	<b>Մերի Ավետիսյան</b>	Հայոց ազգագրության թանգարանի արծաթե սպասքի ֆոնդային հավաքածուի մշակութային օրինաչափություններն ու առանձնահատկությունները
16:00-16:15	<b>Էմմա Այվազյան</b>	Հայոց ազգագրության թանգարանի մանածագործական և գորգագործական գործիքների հավաքածուն
16:15-16:30	<b>Կարեն Ասատրյան</b>	Հայոց ազգագրության թանգարանի ծխախոտատուփերի հավաքածուն
16:30-16:45	<b>Հռիփսիմե Պիկիչյան</b>	Հայաստանի ազգագրության թանգարանի երաժշտական հավաքածուն
16.45-17.00	<b>Մարինե Հարոյան</b>	Ազգային երաժշտական ինքնության խնդիրների քննությունը «Դարից երկար. Արշակ Չոպանյան-Կոմիտաս» ցուցադրության համատեքստում
17:00-17:15	<b>Սոֆի Խաչմանյան Sofi Khachmanyam</b>	Կեսարիայի ազգային տարազի երկու նմուշ Թելֆեյան-Թիմուրեան հավաքածուներից (XIX դարի երկրորդ կես): Two samples of the national costume of Caesarea from the Telfeyan-Timurean collections (second half of the XIX century)
17:15-17:30	<b>Կասիա Արմենյան Gassia Armenian</b>	Հանգույցների և օղակների հայկական արվեստը: Janyak; armenian art of knots and loops.
17.30-17:45	<b>Թինա Դեմերճյան Tina Demerchian</b>	Մեր նախնիների ճամփորդությունը The journey of our ancestors

**III մասնաճյուղ - ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱ, ՍՓՅՈՒՌՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Համանախագահներ՝

**Ռուբեն Կարապետյան**, պատմ. գիտ. Դոկտոր; **Միհրան Գալստյան**, պատմ. գիտ. դոկտոր

**III секция - ЭТНОСОЦИОЛОГИЯ, ИССЛЕДОВАНИЯ ДИАСПОРЫ**

Сопредседатели:

**Рубен Карапетыан** - доктор ист. Наук; **Мигран Галстян** - доктор ист. наук

**III branch - ETHNOSOCIOLOGY, DIASPORA STUDIES**

Co-presidents

**Ruben Karapetyan** - Doctor of Historical Sciences; **Mihran Galstyan** - Doctor of Historical Sciences

<b>12:30-12:45</b>	<b>Միհրան Գալստյան</b>	Մշակույթի և ինքնության խնդիրները սփյուռքի անդրազգային միգրանտների շրջանում
<b>12:45-13:00</b>	<b>Ռուբեն Օհանջանյան</b>	Հնդկական համայնքի սոցիալ-մշակութային ազդեցությունները ՀՀ-ում
<b>13:00-13:15</b>	<b>Ռուբեն Կարապետյան</b>	Պատմական հիշողությունը և ինքնությունը սփյուռքում
<b>13:15-13:30</b>	<b>Աշոտ Ավետիսյան</b>	Տնտեսական զարգացում և սփյուռք պետական ծրագիր
<b>13:30-13:45</b>	<b>Սյուզաննա Բարսեղյան</b>	Հայրենիքը և սփյուռքյան ինքնությունը
<b>13:15-14:00</b>	<b>Նելլի Խաչատուրյան</b>	Հայերի էթնոկրոնական ինքնության հետազոտման տեսական հիմնախնդիրների շուրջ
<b>14:00-14:15</b>	<b>Մարիամ Հարությունյան</b>	Խոշոր քաղաքի բնակչության էթնոկրոնական ինքնությունը և տոնաճիսական սովորույթները (Երևանի բնակչության ուսումնասիրության նյութերի հիման վրա)
<b>14:15-14:30</b>	<b>Սալվինե Մարկոսյան</b>	Ինքնության հիմնախնդիրները պոլսահայության պարբերական մամուլում XIX դարի սկզբին
<b>14:30-14:45</b>	<b>Աննա Չախմախչյան</b>	Ընտանիքը և ընտանեկան արժեքները էթնոսի պահպանման գործընթացում
<b>14:45-15:00</b>	<b>Լուսինե Տանաջյան</b>	Մշակույթի դերը հայկական սփյուռքում ինքնության համատեքստում

Ելույթների տևողությունը \* Длительность выступления \* Length of speech

5-7 րոպե \* 5-7 минут \* 5-7min

Չեկույցի տևողությունը \* Длительность доклада \* Duration of report

մինչև 15 րոպե \* до 15 минут \* up to 15 min

## **ԱՄՓՈՓԻՉ ՆԻՍ \* ЗАКЛЮЧИТЕЛЬНОЕ ЗАСЕДАНИЕ \* FINAL SITTING**

**ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆԻՍԵՐԻ ԴԱՎԻՃ**

**КОНФЕРЕНЦ-ЗАЛ ИМ. ЕРВАНДА ЛАЛАЯНА**

**CONFERENCE HALL OF SITTINGS AFTER YERVAND LALAYAN**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ**

**ТЕЗИСЫ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ**

**ABSTRACTS OF THE INTERNATIONAL CONFERENCE**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ՀԻՆ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ**  
**ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ**  
**(Մ.Թ.Ա. II ՀԱԶ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)**

Աշոտ Փիլիպոսյան  
ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոն,  
«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական  
միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, պ.գ.դ., պրոֆեսոր  
piliposyan@yahoo.com

**Հիմնաբառեր՝** Հայկական լեռնաշխարհ, Հին Մերձավոր Արևելք, Եգիպտոս, Միտաննի, Կասսիտական Բաբելոն, գլանաձև կնիքներ, անագ, Մեծամոր

Հին Մերձավոր Արևելքի համար մ.թ.ա. II հազ. միջնամասը (մ.թ.ա. XVI-XIV դդ.) հագեցած էր ռազմաքաղաքական և սոցիալտնտեսական բուռն գործընթացներով: Սա այն ժամանակահատվածն էր, երբ տարածաշրջանում քաղաքական և տնտեսական գերիշխանության հասնելու համար լուրջ հակասություններ էին ձևավորվել մի կողմից Նոր Խեթական թագավորության և նրա դաշնակիցների (Արծավա և Վիլուսա-Տրոյա ռազմաքաղաքական կազմավորումներ), մյուս կողմից՝ արդեն հզորացած Եգիպտոսի Նոր թագավորության, Միտաննիի և Կասսիտական Բաբելոնի միջև:

Պայքարն առավելապես, Միջերկական ծովի արևելյան ափամերձ հատվածից դեպի Պարսից ծոցի հյուսիսարևմտյան շրջանը տանող առևտրատնտեսական բանուկ ճանապարհների վրա գերիշխանության հաստատումն էր և ինտենսիվ իրականացվող ոսկու, անագի, ծովախեցիների, մետաղի, զենքի և ռազմավարական նշանակության այլ ապրանքների տարանցիկ առևտրի վերահսկումը: Այս պայքարում երկու խմբավորումներ էլ ձգտում էին իրենց քաղաքական ազդեցության տակ որպես դաշնակիցներ ներառել տարածաշրջանի տարբեր ցեղախմբերի ու վաղպետական կազմավորումների:

Դատելով ոչ մեծաքանակ գրավոր սկզբնաղբյուրների տվյալներից, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում իրականացված պարբերական հնագիտական հետազոտությունների արդյունքներից, այդ հակամարտության մեջ, որպես Եգիպտոսի Նոր թագավորության, Միտաննիի և Կասսիտական Բաբելոնի դաշնակից, ներքաշվել էին նաև տեղի վաղպետական կազմավորումները (Հայասա-Ածծի, Թեգարա, Ալզի, Էթիունի և այլն): Մասնավորապես այդ են վկայում Լճաշենի, Արթիկի, Լոռի բերդի, Արուճի, Քանագեղի, Գեղարոտի, Զավախքի ու բրոնզեդարյան համալիրներից հայտնաբերված միտաննական գլանաձև կնիքները, Մեծամորի և Հոռոմի եգիպտական կոյաբզեզ-դրոշմները (սկարաբեյներ) և Մեծամորի իշխանական դամբարաններում պեղված Կասսիտական Բաբելոնի տիրակալներ Ուլամ-Բուրարիաշի և Կուրիգալզուի արձանագիր խորհրդանշանները: Այդ նյութերի մեկնաբանմանն էլ նվիրված է սույն զեկուցումը:

**АРМЯНСКОЕ НАГОРЬЕ В СФЕРЕ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИХ И ТОРГОВО-  
ЭКОНОМИЧЕСКИХ ПРОЦЕССОВ ДРЕВНЕГО БЛИЖНЕГО ВОСТОКА  
(II ПОЛОВИНА II ТЫС. ДО Н. Э.)**

Ашот Пилипосян  
АГПУ, Кафедра истории Армении, ГНКО  
“Служба по Охране Исторической Среды и Историко-культурных  
Музеев-заповедников”, д.и.н., профессор  
piliposyan@yahoo.com

**Ключевые слова:** Армянское нагорье, Древний Ближний Восток, Египет, Митанни, Касситский Вавилон, цилиндрические печати, олово, Мецамор

Для древнего Ближнего Востока середина II тыс. до н. э. (XVI-XIV вв. до н. э.) была насыщена бурными военно-политическими и социально-экономическими процессами. Это был период, когда для достижения политического и экономического господства в регионе сформировались серьезные противоречия с одной стороны между Новым Хеттским царством и его союзниками (военно-политические образования Арцава и Вилуса-Троя), а с другой, уже могущественным Новым царством Египта, Митанни и Касситским Вавилоном.

Борьба главным образом велась за установление господства на оживленных торгово-экономических дорогах, ведущих от восточного побережья Средиземного моря к северо-западному региону Персидского залива, и за контроль над интенсивной транзитной торговлей золотом, оловом, ракушками, металлом, оружием и другими стратегически важными товарами. В этой борьбе обе группы стремились включить различные племена и ранние государственные образования региона в качестве союзников под свое политическое влияние.

Судя по данным немногочисленных письменных источников, а также по результатам регулярных археологических исследований, проводимых в разных регионах Армянского нагорья, в этот конфликт были вовлечены также местные ранние государственные образования (Хайса-Ацци, Тегарама, Алзи, Этиуни и др.) как союзники Нового царства Египта, Митанни и Касситского Вавилона. В частности, об этом свидетельствуют митаннийские цилиндрические печати, раскопанные в комплексах позднего бронзового века Лчашен, Артик, Лори-Берд, Аруч, Канегег, Гехарот, Джавахк, египетские печати-штампы (скарабей) из Мецамора и Орома, а также символы власти с надписями правителей Касситского Вавилона Улам-Бурариаши и Куригальзу, раскопанные из царских гробниц Мецамора. Данный доклад посвящен анализу этих материалов.

**THE ARMENIAN HIGHLANDS IN THE SPHERE OF MILITARY-POLITICAL  
AND TRADE-ECONOMIC PROCESSES IN THE ANCIENT NEAR EAST  
(II HALF OF THE II MILLENNIUM B.C.)**

Ashot Piliposyan  
ASPU, Department of Armenian History,  
SNCO “Service for the Protection of the Historical Environment and  
Historical and Cultural Museums-Reserves”, doctor-professor  
piliposyan@yahoo.com

**Key words:** Armenian Highlands, Ancient Near East, Egypt, Mitanni, Kassite Babylon, cylinder seals, tin, Metsamor

For the ancient Near East, the middle of the II millennium BC (XVI-XIV centuries BC) was saturated with turbulent military-political and socio-economic processes. It was a period when, in order to achieve political and economic domination in the region, serious contradictions were formed on the one hand between the New Hittite Kingdom and its allies (the military-political formations of Artsava and Wilusa-Troy), and on the other hand, the already powerful New Kingdom of Egypt, Mitanni and Kassite Babylon.

The struggle was mainly for the establishment of dominance on the busy trade and economic roads leading from the eastern coast of the Mediterranean Sea to the northwestern region of the Persian Gulf, and for control over the intensive transit trade in gold, tin, shells, metal, weapons and other strategically important goods. In this struggle, both groups sought to include various tribes and early state formations of the region as allies under their political influence.

Based on the data of a few written sources, as well as on the results of regular archaeological research conducted in different regions of the Armenian Highlands, local early state formations (Hayasa-Azzi, Tegarama, Alzi, Etiuni, etc.) were also involved in that conflict as allies of the New Kingdom of Egypt, Mitanni and Kassite Babylon. In particular, this is evidenced by the cylindrical seals of Mitanni, excavated from the late Bronze Age complexes of Lchashen, Artik, Lori Berd, Aruch, Kanagegh, Gegharot, Javakhk, by Egyptian stump-seals (scarabs) from Metsamor and Horom, as well as by insignia of power with inscriptions of the rulers of Kassite Babylon - Ulam-Burariash and Kurigalzu, excavated from ruler tombs of Metsamor. This report is devoted to the analysis of these materials.

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Անուշ Տեր-Մինասյան

Ա. Թամանյանի անվ. ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ, տնօրենի  
խորհրդական, ճարտարապետության թեկնածու  
anoush\_arch@hotmail.com

**Հիմնաբաներ՝** ինքնություն, միջնադարյան, ճարտարապետություն, հորինվածքային, սկզբունքներ, ազգային, մտածողություն:

Բազում դարերի ընթացքում՝ անդադար պատերազմների, քաղաքական, պատմական ու բնական աղետների ու արհավիրքների պայմաններում մեր ազգի ինքնությունը մեծ չափով պահել են մշակույթը, արվեստը, մասնավորապես՝ ճարտարապետությունը: Ճարտարապետությունը մեծ դեր է ունեցել այդ գործոնների շարքում, քանի որ այն իր բնույթով ոչ միայն բազմաթիվ արվեստների սինթեզ է, այլև ամենասերտ ձևով է կապված երկրի բնաշխարհի, ազգային մտածողության, գեղարվեստական պատկերացումների և նույնիսկ քաղաքական ու տնտեսական իրավիճակների հետ: Պահպանելով դարերի ընթացքում մշակված ճարտարապետական սկզբունքները, հայ ժողովուրդը կարողացել է ամենաձանր վիճակից՝ նույնիսկ երկարատև ստեղծագործական դադարից հետո, փյունիկի նման վերածնվել և շարունակել նախագծել ու կառուցել եկեղեցական և քաղաքացիական շինությունները՝ նույն սկզբունքներին համաձայն: Իսկ

հավատարմությունը նախնիների ավանդներին իր հերթին բերել է ազգային ինքնության գիտակցմանն ու պահպանմանը, սեփական նկարագիր ունենալու պահանջին:

Բնության, կլիմայական պայմանների, ազգային աշխարհընկալման և բազմաթիվ այլ մեծ ու փոքր գործոնների հիման վրա ստեղծված այս սկզբունքները կիրառելի են և այսօր:

## **СРЕДНЕВЕКОВАЯ АРМЯНСКАЯ АРХИТЕКТУРА, КАК ОДИН ИЗ ФАКТОРОВ САМОИДЕНТИФИКАЦИИ НАРОДА**

Ануш Тер-Минасян,  
Национальный музей-институт архитектуры им. А. Таманяна,  
советник директора, кандидат архитектуры,  
anoush\_arch@hotmail.com

**Ключевые слова:** самоидентификация, средневековая, архитектура, композиционные, принципы, национальное, мышление.

В течение всей своей многотрудной истории, в тяжелейших условиях постоянных войн, набегов иноземных захватчиков, политических и природных потрясений и катаклизмов, самоидентификация армянского народа сохранялась во многом благодаря национальной культуре, в частности – архитектуре. В ряду этих факторов самоидентификации архитектура играет очень важную роль – не только потому что она по своей сути есть синтез различных искусств и наук, но и по причине тесной связи архитектуры с природными и климатическими особенностями страны, национальным мышлением, художественными представлениями народа и даже политической и экономической ситуацией в стране.

Сохраняя и развивая созданные и разработанные в течение многих веков архитектурные традиции, народ умел даже в самых тяжёлых условиях – даже после длительного творческого простоя – возрождаться, подобно фениксу, и продолжать проектирование и строительство церковных и гражданских зданий, благоустройство городов – соответственно существующим вековым традициям. А верность национальным истокам в свою очередь приводила к осознанию своей национальной сущности, желанию иметь и сохранить собственное видение мира, и – благодаря этому – выстоять в веках.

Созданные на основе природных и климатических особенностей, национального восприятия мира и других малых и больших факторов, эти принципы армянской архитектуры применимы и сейчас.

## **MEDIEVAL ARMENIAN ARCHITECTURE - AS ONE OF THE FACTORS OF SELF-IDENTIFICATION OF THE PEOPLE.**

Anush Ter-Minasyan,  
National Museum-Institute of Architecture after A. Tamanyan,  
director's adviser, Ph.D in Architecture  
e-mail: anoush\_arch@hotmail.com

**Key words:** self-identification, mediaeval, architecture, compositional, principles, national, thinking.

Throughout its difficult history, in the hard conditions of constant wars, raids by foreign invaders, political and natural upheavals and cataclysms, the self-identification of the Armenian people has been preserved largely due to national culture, in particular – architecture. Among these factors of self-identification, architecture plays a very important role - not only because it is inherently a synthesis of various arts and sciences, but also because of the close connection of architecture with the natural and climatic features of the country, national thinking, artistic ideas of the people, and even political and economic situation in the country.

Preserving and developing the architectural traditions created and developed over many centuries, the people were able, even in the most difficult conditions - even after a long creative downtime - to be reborn like a phoenix and continue the design and construction of church and civil buildings, the improvement of cities - in accordance with the centuries-old traditions. And fidelity to national origins, in turn, led to the realization of the own national essence, the desire to have and maintain own vision of the world, and - through this - to survive for centuries.

Created on the basis of natural and climatic features, national perception of the world and other small and large factors, these principles of Armenian architecture are still applicable today.

## **ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՒՄ**

Սուսան Հարությունյան  
Արա Հարությունյանի Հիմնադրամ, պատմ. գիտ. թեկնածու  
arasus@yandex.ru

**Հիմնաբառեր՝** Հայաստան, Արա Հարությունյան, քանդակ, մոնումենտալ արվեստ, հարթաքանդակ, պատմություն, ինքնություն

Քանդակագործ-մոնումենտալիստ Արա Հարությունյանի (1928-1999) ստեղծագործական հսկայական ժառանգությունն ունի գեղարվեստական բարձր արժեք, առանձնանում է ժանրային և թեմատիկ բազմազանությամբ, կոմպոզիցիաների և պլաստիկ կերպարների առատությամբ: Արա Հարությունյանը XX դարի երկրորդ կեսի Հայաստանի մշակութային վերածննդի վառ ներկայացուցիչն է: Այդ ժամանակաշրջանում են ստեղծվել նրա գլուխգործոցների հիմնական մասը, ստեղծագործություններ, որոնք ձևավորում են ազգային ինքնագիտակցություն, կրում են երկրի մշակութային կոդը, ազգային շունչ են հաղորդում շրջապատին: Դրանց թվում են երկրի գլխավոր խորհրդանիշ «Մայր Հայաստան» վիթխարի հուշակոթողը (1967), Սարդարապատի ճակատամարտին (1968) և Մուսա լեռան հերոսամարտին նվիրված հուշահամալիրները (1976), Սայաթ - Նովայի (1963) և Կոմիտասի հուշարձանները Երևանի կոնսերվատորիայի պուրակում (1988) և հայ մշակույթի գործիչների պանթեոնում (1954), «Արծիվ Շինարար» (1966) և «Վահագն Վիշապաքաղ» (1966) կոմպոզիցիաները, Գեղարդի Առյուծամայրը (1958) և այլն:

Նրա ստեղծագործություններում ներկայացված են Հայաստանի պատմական և մշակութային զարգացման հիմնական փուլերը՝ սկսած դիցաբանությունից, հնագույն առասպելներից, առակներից, միջնադարի ժամանակաշրջանից, քրիստոնեական թեմաներից և ավարտած իր անկախության և ինքնության պահպանման համար հայ ժողովրդի մղած հերոսական պայքարով: Հարությունյանի ստեղծած պատմական և հերոսական կերպարները հիմք են հանդիսացել հայերի ժամանակակից ազգային ինքնության ձևավորմանը:



Հարությունյանը ստեղծել է հասարակական գիտակցության ձևավորման գործում կարևորագույն դեր ունեցած պատմական և մշակութային գործիչների դիմաքանդակները: Բազմիցս անդրադարձել է Կոմիտասի սրբադասված կերպարին: Նրան են նվիրված քանդակագործի առաջին և վերջին մոնումենտալ աշխատանքները:

Ընտրելով ճարտարապետության և քանդակագործության սինթետիկ ճանապարհը՝ Արա Հարությունյանը վերականգնեց հայկական ճարտարապետա-քանդակագործական համալիրների ավանդույթները, ստեղծեց իր բացառիկ վառ ոճը՝ ներդնելով նոր գեղագիտություն և պլաստիկ լուծումներ, որոնք կանխորոշեցին Հայաստանի կերպարվեստի զարգացման ընթացքը հետագա տարիներին:

Հարությունյանը ստեղծել է պատմական թեմաներով հարթաքանդակներ ճարտարապետական կառույցների ձևավորման համար: Դրա վառ օրինակն են Էրեբունի թանգարանի քանդակագարդունը (1968), Երևանի Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի քանդակահամալիրը (1966-1976), որն արտացոլում է հայ թատրոնի 2000-ամյա պատմությունը: Այդ թվում՝ առակագիր Վարդան Այգեկցու մոտիվներով Երևանի գինու կոմբինատի «Աղվեսները» և «Պայքար առյուծի հետ» հարթաքանդակները, որոնք ստեղծվել են դեռևս 1961 թվականին և այլն:

Հարությունյանի ստեղծագործությունը, արտացոլելով Հայաստանի պատմության հիմնական փուլերը, մեծապես նպաստել է ժամանակակից հայերի հավաքական և անհատական ինքնության ձևավորմանը:

## ТВОРЧЕСТВО АРА АРУТЮНЯНА В ОСНОВЕ СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ

Сусан Арутюнян

Фонд Ара Арутюняна, канд. ист. наук

arasus@yandex.ru

**Ключевые слова:** Армения, Ара Арутюнян, искусство, монументальная скульптура, рельеф, история, идентичность

Творческое наследие скульптора-монументалиста Ара Арутюняна (1928–1999) огромно, художественная значимость велика; оно отличается жанровым, тематическим и композиционным многообразием.

Ара Арутюнян – яркий представитель эпохи культурного возрождения Армении второй половины XX века. Шедевры Мастера, созданные в этот период, оказали огромное влияние на общественную среду, определили культурный код и национальное самосознание армянского народа. Среди них главный символ страны – грандиозный монумент «Мать-Армения» (1967), мемориальные ансамбли, посвященные Сардарапатской битве (1968) и героям – защитникам Муса Лер (1976), памятники Саят-Нове (1963) и Комитасу в Пантеоне деятелей армянской культуры (1954) и в сквере Ереванской консерватории (1988), композиции «Орел-строитель» (1966) и «Ваагн Драконоборец» (1965), декоративная скульптура «Львица Гегарда» (1958) и многие другие.

Творчество А. Арутюняна отразило основные вехи исторического и культурного развития Армении – от мифологических сюжетов, древних легенд о зарождении армянского народа, басен, периода средневековья, христианских тем до героической борьбы за национальную не-

зависимость. Созданные Арутюняном исторические и героические образы послужили основой для формирования современной национальной идентичности армян.

Арутюнян создавал символические образы, олицетворяющие Армению, скульптурные портреты исторических и культурных деятелей, сыгравших важную роль в развитии общественного сознания. В частности, неоднократно обращался к образу композитора Комитаса, причисленного к лику святых, – ему посвящены первое и последнее монументальные произведения скульптора.

Идя по пути синтеза скульптуры и архитектуры, Мастер возродил традиции средневековых армянских архитектурно-скульптурных ансамблей, создал уникальный яркий стиль, привнес новую эстетику и пластические решения, которые на много лет вперед определили развитие изобразительного искусства в Армении. Арутюнян создал сюжетные рельефы на исторические темы, которыми оформлял архитектурные сооружения. Яркие примеры – оформление музея «Эребуни» (1968), скульптурный ансамбль Ереванского академического театра имени Г. Сундукяна (1966–1976), рассказывающий о 2000-летней истории армянского театра, а также рельефы на фасаде Ереванского винного комбината по мотивам баснописца Вардана Айгекци «Лисы» и «Борьба со львом», созданные в 1961 году, и многие другие.

Отразив основные вехи истории Армении, творчество А. Арутюняна сыграло огромную роль в формировании коллективной и индивидуальной идентичности современных армян.

## ARA HARUTYUNYAN'S CREATIVITY IS THE BASIS OF MODERN ARMENIAN IDENTITY

Susan A. Harutyunyan

Ara Harutyunyan Foundation, Ph.D in History

arasus@yandex.ru

**Key words:** Ara Harutyunyan, Armenia, art, monumental sculpture, history, identity, relief

The creative heritage of the monumental sculptor Ara Harutyunyan (1928-1999) is enormous, it has artistic thematic and compositional diversity. Ara Harutyunyan is an outstanding representative of the era of cultural revival in Armenia in the second half of the 20th century. The art of the Master greatly impacted the environment around us and determined the Armenian people's cultural code and national identity. Among them is the main symbol of the country - the grandiose monument of Mother Armenia (1967), a memorial complex dedicated to the Battle of Sardarapat (1968) and the heroes defenders of Musa Ler (1976), the monuments to Sayat-Nova (1963) and Komitas in the square of the Yerevan State Conservatory (1988), Memorial to Komitas in the Pantheon (1954), the composition "Eagle the Builder" (1966) and "Vaagn's fight with a dragon" (1965), a decorative sculpture of the Geghard lioness (1958) and many others.

Harutyunyan's work reflected the main milestones in the development of the historical and cultural processes in Armenia, starting from mythological images, ancient legends about the origin of the Armenian people, fables, the period of the Middle Ages, Christian themes and ending with the heroic struggle of the Armenian people for their independence. The historical and heroic images created by Harutyunyan formed the basis for the modern identity of the Armenian people.

Harutyunyan created generalized symbolic images representing Armenia. Sculptural portraits of historical and cultural figures played an essential role in shaping the public consciousness of the Arme-

nian nation. For instance, Master used the image of the composer Komitas. The first and last monumental works of the sculptor are dedicated to him.

Ara Harutyunyan revived traditional medieval Armenian architectural and sculptural complexes by synthesizing sculpture and architecture. He created its unique bright style, brought new aesthetics and plastic solutions for many years, determining the development of fine art in Armenia. Moreover, Harutyunyan embodied historical themes through sculptural relief. A striking example is the building and the entrance group of the Erebuni Museum (1968), the sculptural complex of the National Academic Theater after Gabriel Sundukyan (1966-1976), depicting the 2000-year history of the Armenian theater. Including reliefs of the Yerevan wine factory based on the fabulist Vardan Aigekci's "Foxes" and "Fight with the Lion," created in 1961.

Harutyunyan's work, reflecting the main milestones of the history of Armenia, played a tremendous role in forming modern Armenians' collective and individual identities.

## ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐ

Սվետլանա Պողոսյան

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, գիտական գծով փոխստորեն,

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ավագ գիտաշխատող, պ. գ. թ.

sv\_ethnomuseum@yahoo.com

**Հիմնաբաներ՝** հայկական մշակույթ, ազգային, ինքնություն, ազգագրական բնույթ, առանձնահատկություն, մշակույթի ենթահամակարգեր, ազգագրական հավաքածու, մշտական ցուցադրություն, ժամանակավոր ցուցահանդեսներ, մշակութային միջոցառում:

Զեկուցման թեման կարևոր է և արդիական նրանով, որ գործող թանգարանի փորձով ցույց են տրվում ազգագրական թանգարանների բնույթի, առաքելության և գործունեության, թանգարանային ցուցադրության և հավաքածուների առանձնահատկություններ:

Ի տարբերություն պատմական բնույթի թանգարանների հայաստանյան ամենախոշոր ազգագրական թանգարանում՝ Հայոց ազգագրության թանգարանում ներկայացված են հայ էթնոսի հնագույն, միջնադարյան և ավանդական մշակութային համակարգերի բնութագրական գծերը, տնտեսական կենցաղը՝ գլխավոր զբաղմունքներով և օժանդակ տնտեսածներով, արհեստագործությունները և առևտուրը, նյութական մշակույթի կարևոր տարրեր՝ բնակարանը և դրա ներքնատեսքը՝ գյուղական, քաղաքային և խորհրդային համալիրներով, առօրյա և տոնական ուտեստի համակարգը, տարազախմբերը և այլն: Հատուկ անդրադարձ է արված ընտանիքին և ազգատոհմին, որպես սոցիալական մշակույթի կարևոր երևույթներ:

Ներկայացված են անցումային ծեսերից՝ ծննդյան և հարսանեկան արարողություններին, տոնական արարողություններին, ինչպես նաև հոգևոր մշակույթի տարրերին՝ ժողովրդական նվագարվեստին, ժողովրդական ներկայացումներին և ժողովրդական բժշկության հմտություններին վերաբերող ցուցադրական համալիրներ: Առանձին ցուցադրական համալիրով ցուցադրված են դեկորատիվ կիրառական արվեստի այն ճյուղերը, որոնցում կենսունակ են մնացել հայկական ավանդական արհեստագործությունների ավանդները: Թանգարանում պահպանվող, ցուցադրվող, ուսումնասիրվող և հանրահռչակվող հայոց նյութական և ոչ մշակութային ժառանգությանը վերա-

բերող թանգարանային հավաքածուների շնորհիվ թանգարանը դարձել է հայկական մշակույթի մերօրյա տաճար, ազգային մշակույթի գանձարան: Հայոց ազգը ներկայացվում է հայկական մշակույթի ինքնատիպ թեմաներին վերաբերող արտեֆակտերով՝ հայկական ուտեստ, տարազ և զարդեր, գեղարվեստական գործվածքի տարբեր ճյուղեր, և որ կարևոր է՝ ազգային ինքնության կարևորագույն բաղադրատարրերի՝ խաչքար, դուդուկ և այլն, միջոցով: Թանգարանի հավաքածուներում ընդգրկված են հայ էթնիկ հանրույթի արևմտահայ և արևելահայ համայնիների, տարբեր պատմական ժամանակաշրջաններին վերաբերող մշակութային արժեքներ: Ցուցադրության մեջ մշակութային երևույթները ներկայացված են ըստ պատմաազգագրական մարզերի, համահայկական ընդհանրություններին զուգահեռ ցուցադրվում են նաև մշակութային տեղական առանձնահատկություններ

Հայոց ազգագրության թանգարանում գործող ցուցադրությունը, պարբերաբար կազմակերպվող ազգագրական բնույթի ժամանակավոր ցուցահանդեսները և կրթական ծրագրերը, ինչպես նաև թանգարանում գործող երկրորդ ցուցադրությունը ձևավորում են ազգային ինքնության զարգացման կարևոր ազդակներ: Թանգարանն իր բազմաբնույթ հավաքածուների շնորհիվ և նյութական և ոչ նյութական մշակույթի բաղադրատարրերի ցուցադրմամբ դարձել է հաղորդակցական առանձնահատուկ մշակութային միջավայր՝ մշակութային տարրերը ներկայացնելով ժամանակի և տարածության հոլովություն:

## МУЗЕЙ ЭТНОГРАФИИ АРМЯН - ХРАМ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ И НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ

Светлана Погосян

Мемориальный комплекс Сардарapatской битвы, Национальный музей этнографии и истории освободительной борьбы армян, заместитель директора по научной части/работе, Институт археологии и этнографии НАН РА, старший научный сотрудник, к. и. н.  
sv\_ethnomuseum@yahoo.com

**Ключевые слова:** армянская культура, национальная идентичность, этнографический характер, особенность, подсистемы культуры, этнографическая коллекция, постоянная экспозиция, временные выставки, культурное мероприятие.

Тема доклада важна и актуальна тем, что по опыту действующего музея демонстрируются особенности характера, миссии, деятельности, музейной экспозиции и коллекций этнографических музеев. В отличие от исторических музеев, в крупнейшем этнографическом музее Армении-Музее этнографии армян, демонстрируются характерные черты древних, средневековых и традиционных культурных систем армянского этноса, хозяйственный быт с основными и вспомогательными занятиями, ремесла и торговля, важные элементы материальной культуры – народное жилище и интерьер сельского, городского и советского жилых комплексов, система повседневной и праздничной пищи, группы национальных костюмов и т. д. Особое внимание было уделено семье и родне как важным явлениям социальной культуры. Из переходных обрядов в экспозиции представлены выставочные комплексы, связанные с днями рождения и свадьбами, праздничными церемониями, элементами духовной культуры – народной музыкой, народными театральными представлениями и навыками народной медицины. Отдельным выставочным комплексом представлены те отрасли декоративно-прикладного искусства, в которых сохранились

жизнеспособные традиции армянских ремесел. Благодаря хранящимся, экспонируемым, изучаемым и популяризируемым музейным коллекциям армянского материального и нематериального культурного наследия, музей стал сегодняшним храмом и сокровищницей армянской национальной культуры. Армянский народ представлен артефактами, относящимися к самобытным темам армянской культуры: национальные блюда, одежда и украшения, различные отрасли художественной ткани и важнейшие составляющие национальной идентичности – хачкар, дудук и др. В коллекциях музея хранятся культурные ценности разных исторических периодов, относящиеся к западноармянским и восточноармянским комплексам армянского этноса. Культурные ценности демонстрируются по историко-этнографическим регионам. Наряду с общеармянскими общностями демонстрируются также местные культурные особенности.

Постоянная экспозиция Музея этнографии армян, периодически организуемые временные выставки этнографического характера и образовательные программы, а также вторая экспозиция музея формируют важные импульсы развития национальной идентичности.

Благодаря своим разнообразным коллекциям и демонстрации компонентов материальной и нематериальной культуры, музей стал своеобразной коммуникативной культурной средой, представляя элементы культуры во времени и в пространстве.

## MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY - TEMPLE OF ARMENIAN CULTURE AND NATIONAL IDENTITY

Svetlana Poghosyan

Memorial Complex of Sardarapat Battle, National Museum of Armenian  
Ethnography and History of the Liberation Struggle, Deputy Scientific Director,  
Institute of Archeology and Ethnography of the NAS RA, Senior Researcher, Ph.D.  
sv\_ethnomuseum@yahoo.com

**Key words:** Armenian culture, national identity, ethnographic nature, peculiarity, cultural subsystems, ethnographic collection, permanent exposition, temporary exhibitions, cultural event.

The topic of the report is important and actual, because the peculiarities of the nature, mission, activity, museum exposition and collections of ethnographic museums are demonstrated through a particular museum experience. Unlike historical museums, the largest ethnographic museum of Armenia, the Museum of Armenian Ethnography, demonstrates the characteristic features of the ancient, medieval and traditional cultural systems of the Armenian ethnicity, its economic life with main and auxiliary occupations, crafts and trade, important elements of tangible culture – traditional dwelling as well as rural, urban and Soviet-era interiors, system of everyday and festive food, groups of national costume, etc. Special attention is paid to the family and relatives as important phenomena of social culture. Of the transitional rites, the exhibition demonstrates complexes associated with birthdays and weddings, festive ceremonies, elements of spiritual culture – folk music, folk theater performances and skills of folk medicine. A separate exhibition presents those branches of decorative and applied art that have preserved the viable traditions of Armenian crafts. Thanks to the stored, exhibited, studied and popularized museum collections concerning the Armenian tangible and intangible cultural heritage, the museum has become today's temple and treasury of the Armenian national culture. The Armenian people are represented by artifacts related to the typical elements of Armenian culture: national dishes, clothing and

jewelry, various branches of decorative textiles and the most important components of national identity – khachkar, duduk, etc. The museum houses cultural values of different historical periods related to the Western Armenian and Eastern Armenian complexes of the Armenian ethnic society. Cultural values are exhibited according to historical and ethnographic regions. Along with pan-Armenian commonalities, local cultural peculiarities are also demonstrated.

Permanent exposition of the Museum of Armenian Ethnography, periodically organized temporary exhibitions of an ethnographic nature and educational programs, as well as the second exposition of the museum create important impulses for the development of national identity. Due to its diverse collections and components of tangible and intangible culture, the museum has become a kind of communicative cultural environment, exhibiting the elements of culture in time and space.

## ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ

### ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեքստաբանության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր,  
tamar.hayrapetyan@gmail.com

### ԱԼԻՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեքստաբանության բաժնի կրտսեր գիտաշխատող  
alinokkirakosyan@gmail.com

**Հիմնաբաներ՝** Գարեգին Սրվանձտյանց, դյուցազնավեպ, բանահավաք, ծես, հավատալիք, բանահյուսություն, ծրագիր-հարցարան:

XIX դարի երկրորդ կեսից հայ բանահյուսության ու ազգագրության ասպարեզում ծավալված հավաքչական բուռն գործունեությունը՝ պայմանավորված ազգային-լուսավորչական շարժման ու ինքնագիտակցության վերելքով, ընդգրկում է պատմական Հայաստանի ազգագրական տարբեր շրջանները: 70-80-ական թվականները բնութագրվում են որպես տարերային բանահավաքչության և հարցարանների ստեղծման ժամանակաշրջան, երբ ժողովրդի ոչ նյութական մշակութային ժառանգության՝ տոների, ծեսերի ու հավատալիքների, բանավոր խոսքի տարբեր սեռերի ու ժանրերի որոնումը, գրառումն ու հրատարակությունը դառնում է ժամանակի առաջավոր մտավորականության հիմնական զբաղմունքը:

Զեկուցման նպատակն է կրթամշակութային վերելքի շրջադարձային այդ փուլում ոչ միայն արժևորել Սրվանձտյանցի (1840-1892) մեծագույն ծառայությունը հայ բանագիտությանը՝ «Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպի հայտնաբերման, գրառման և հրատարակման առումով, այլև մեթոդաբանական միասնական սկզբունքների բացակայության պայմաններում «Գրոց ու բրոց» աշխատության մեջ աննախադեպ ծրագիր-հարցարանի սկզբնավորումը, ինչն ունեցավ բազմաթիվ հետևորդներ:

Զեկուցման մեջ քննվում են հայ ժողովրդագիտական մտքի զարգացման պատմության մեջ կարևոր դեր խաղացած՝ Սրվանձտյանցի այն աշխատությունները, որոնցում ընդգրկված նյութերը, որպես մատենագիտական հազվագյուտ նմուշներ, պահպանում են գիտական բացառիկ հետաքրքրությունը և ձեռք են բերել սկզբնաղբյուրի նշանակություն: Անդրադարձ է կա-

տարվում Արևմտյան Հայաստանի XIX դարի երկրորդ կեսի տնտեսական ու քաղաքական իրավիճակին, բազմաթիվ գավառների ուղեգրական, հնախոսական, վիճակագրական հարուստ նյութերին:

Գ. Սրվանձտյանցը սեփական օրինակով և անձնադիր ջանքերով կորստյան վտանգից փրկում է մեր ժողովրդի ոչ նյութական մշակույթին ժառանգության տարբեր ժանրերի ստեղծագործությունները, որոնց շնորհիվ 1870-ական թվականների սկզբներին նախ՝ հայ բանահյուսությունն ու ազգագրությունը դրվում են իր ժամանակի համար հնարավոր գիտական հիմքերի վրա և ապա՝ այն հետագայում նյութական կայուն հենարան է ծառայում տարբեր բնույթի ժողովրդագիտական հետազոտությունների համար:

## ДЕЯТЕЛЬНОСТЬ ГАРЕГИНА СРВАНДЗТЯНЦА В СФЕРЕ НАРОДОВИДЕНИЕ

ТАМАР АЙРАПЕТЯН

Заведующий кафедрой фольклорной текстологии Института археологии и этнографии  
НАН, РА, доктор филологических наук  
tamar.hayrapetyan@gmail.com

АЛИНА КИРАКОСЯН

Младший научный сотрудник отдела текстологии фольклора Института  
археологии и этнографии НАН РА  
alinokkirakosyan@gmail.com

**Ключевые слова:** Гарегин Срвандзтянц, эпос, сбор фольклора, ритуал, верование, фольклор, план – вопросник.

David Bek is one of the most outstanding figures of the Syunik liberation struggle and the Armenian history in general. Considering this fact, study and observation of the leader of Syunik liberation struggle David Bek in the school program are chosen as a report topic in order to thoroughly understand the attitude of the new generation towards heroic pages of the Armenian history and prominent figures.

The topic is actual as the Syunik issue was and still remains actual both in the past and at the present time because of its regional and political circumstances. Teachers should root in the memory of generations the important pages of our past and especially the cherished cause of David Bek, who stood at the origins of the liberation struggle of Syunik, whose precepts were guided by the prominent figure Garegin Nzhdeh and others.

The report aims to present through comparison and analysis how the topic is taught at a modern Armenian school, to reveal the attitude, perceptions and ideas of students based on the field ethnographic materials - interviews, researches, sources of information.

The purpose of the report is to compare the information of the school textbooks on the character and activity of David Bek, to conduct researches and take interviews with teachers and students to find out how they study the topic in the classroom, what methods and materials they use when explaining the lesson, whether the teacher holds events, games and if there are any suggestions for making changes to textbooks and enriching the knowledge on the topic.

## **ՉԻՖԹԱԼԱՐՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԸ ՈՐՊԵՍ ԿԱՐՆՈ ՉԻՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԿՐՈՂ**

Գրիգոր Աղանյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
գիտաշխատող

**Հիմնաբառեր.** Կարին, Ախալցխա, զինագործություն, ՀԱԹ, Չիֆթալարյաններ, զինագործական գործիք, մրցանակ

Հայոց ազգագրության թանգարանում աշխատելու տարիներին ինձ բախտ է վիճակվել 1986-1987թթ. ընթացքում մասնակցել Ախալցխայի գիտարշավներին և հավաքել բավականին հետաքրքիր նյութեր հայկական զինագործության վերաբերյալ: Գրանցված նյութերի արժեքը մեծանում է նրանով, որ որպես բանասաց հանդես է եկել վերջին հայ տոհմիկ զինագործ, արմատներով կարնեցի Փաշիկ (Մկրտիչ-կրտսեր) Հակոբի Չիֆթալարյանը (1900-1990թթ.), ով նույնիսկ կյանքի 9-րդ տասնամյակում շարունակում էր պարապել իր զբաղմունքով: Վարպետ Փաշիկի և ՀԱԹ տնօրինության միջև պայմանավորվածությունների արդյունքում հաջողվեց թանգարան բերել զինագործական գործիքների և հարմարանքների հավաքածուն, որոնց մեջ ամենաարժեքավորը երկթևանի ավանդական փուքսն է, որը բերվել էր Կարինից 1830թ.: Ախալցխայում հաստատված Այվազյան եղբայրները՝ Մկրտիչն ու Օհանեսը, անբաժանել էին և տեղացիները նրանց անվանում էին չիֆթալար (զույգ, երկվորյակ), այստեղից էլ նրանց նոր ազգանվան Չիֆթալարյան ձևը: Չիֆթալարյաններից զատ Ախալցխայում հաստատվեցին Օսմանյան կայսրությունում մեծ համբավ ունեցող այլ տոհմիկ զինագործներ, որոնցից ամենաաչքի ընկնողը սառը զենքի անզուգական վարպետ մահտեսի Գևորգ Բուռունսուզյանն էր: Չիֆթալարյան տոհմի առաջին ներկայացուցիչը, ով մեծ համբավ վաստակեց Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս Մկրտիչ /ավագ/ Չիֆթալարյանն էր, ով 1862թ. Լոնդոնի և 1867թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսներում ներկայացրել է իր պատրաստած հրազենը և արժանացել ոսկե մեդալի: Ավագ Չիֆթալարյանի գործը շարունակեցին նրա Հակոբ և Եղիշե որդիները: Վերջինս երկար չպարապեց զինագործությամբ և սկսեց հրապուրվել տարբեր մեխանիկական սարքեր հնարելով, որոնցից մեղր քամելու հարմարանքը՝ մեխանիկական ցենտրիֆուգան,

միջազգային ցուցահանդեսում մրցանակ ստացավ և պատենտավորվեց: Հայրական արհեստին հավատարիմ մնաց Հակոբ Չիֆթալարյանը, ով իր երկու զավակների՝ Փաշիկի և Արամի հետ Ախալցխայի թուրքական պաշարման ժամանակ «Ջինգեր» մակնիշի կարի մեքենան հարմարեցրել էր փամփուշտի պարկուճ պատրաստելուն: Տոմի վերջին գործող զինագործը Փաշիկ Չիֆթալարյանն էր, ով նաև բարձր որակավորմամբ փականագործ էր, մեխանիկական սարքերի վերանորոգող, բարձրարվեստ ոսկերիչ-արծաթագործ և փորագրիչ էր: Փաշիկ Չիֆթալարյան տաղանդավոր զինագործի ու գյուտարարի մասին ամենախոսուն վկայությունը 1944թ. դեկտեմբերի 14-ի ԽՍՀՄ հրետանու գլխավոր մարշալ Ն.Ն.Վորոնովի հրամանով նրան 300 ռուբլով պարգևատրելն է «հրետանային զենքի կատարելագործման բնագավառում գյուտարարության համար»: Վարպետ Փաշիկի վկայությամբ, խոսքը գնում էր հաուրիցի փակաղակի կատարելագործման մասին:

## РОД ЧИФТАЛАРЯНОВ КАК НОСИТЕЛЕЙ ОРУЖЕЙНЫХ ТРАДИЦИЙ КАРИНА

Григор Аганян

Институт археологии и этнографии НАН РА,  
научный сотрудник

**Ключевые слова:** Карин, Ахалцих, оружейное дело, ГМЭА, Чифталаряны, оружейный инструмент, награда

За годы работы в Армянском этнографическом музее мне повезло в 1986-1987 гг. принять участие в научных экспедициях в Ахалцих и собрать весьма интересный материал относительно армянского оружейного дела. Ценность зафиксированных материалов повышается еще и тем, что в качестве информатора выступал последний оружейник армянского происхождения родом из Карина Пашик (Мкртич младший) Акобович Чифталарян (1900-1990), продолжавший заниматься своей профессией даже на девятом десятилетии жизни. В результате договоренности между мастером Пашиком и администрацией Государственного музея этнографии Армении (ГМЭА) удалось передать в музей коллекцию оружейных инструментов и принадлежностей, наиболее ценным из которых являются традиционные двуручные кузнечные меха, привезенные из Карина в 1830г.. Братья Мкртич и Оганес Айвазяны, поселившиеся в Ахалцихе, были неразлучны и местные жители называли их Чифталар (пара, близнец), отсюда и новая форма их фамилии Чифталаряны. Помимо Чифталарянов, в Ахалцихе поселились и другие родовые оружейники, пользующиеся большим авторитетом в Османской империи, самым заметным из которых был несравненный мастер по изготовлению холодного оружия Геворг Бурунсузян. Первым представителем династии Чифталарянов, получившим большую известность в России и за ее пределами, был Мкртич (старший) Чифталарян, кто представил изготовленное им огнестрельное оружие на всемирных выставках в Лондоне в 1862 г. и в Париже в 1867 г. и был награжден золотой медалью. Дело старшего Чифталаряна продолжили его сыновья Акоп и Егише. Последний недолго занимался оружейным делом и начал увлекаться изобретением различных механических приспособлений, из которых устройство для отжима меда — механическая центрифуга — получило награду на международной выставке и было запатентовано. Акоп Чифталарян остался верен ремеслу своего отца и вместе с двумя сыновьями, Пашиком и Арамом, приспособил швейную машину марки Zinger для изготовления гильз во время турецкой осады Ахалциха. Последним действующим оружейником династии был Пашик Чифталар-

ян, который был также высококвалифицированным слесарем, ремонтником механических устройств, высокохудожественным ювелиром-серебряником и гравировщиком. Самым красноречивым свидетельством о талантливом оружейнике и изобретателе Пашике Чифталаряне было присуждение ему приказом главного маршала артиллерии СССР Н.Н.Воронова от 14 декабря 1944 года 300 рублей «за изобретение в области совершенствования артиллерийского вооружения». По свидетельству мастера Пашика, речь шла об усовершенствовании гаубичного затвора.

## THE LINEAGE OF CHIFTALARIANS AS CARRIERS OF CARIN GUNSMITHING TRADITIONS

Grigor Aghanyan

Institute of Archeology and Ethnography NAS RA,

Researcher

**Key words:** Karin, Akhaltskha, gunsmithing, SEMA, Chiftalarians, weaponry tool, award

During the years of working in the State Ethnographical Museum of Armenia (SEMA), I was lucky to participate in the process of scientific expeditions of Akhaltskha and collecting quite interesting materials on Armenian gunsmithing. The value of the recorded materials is increased by the fact that the last armourer of Armenian origin from Karin Pashik (Mkrtich Jr.) Hakob Chiftalaryan (1900-1990), who continued to practice his profession even in the ninth decade of his life, acted as an informant. As a result of an agreement between master Pashik and the administration of the State Ethnographical Museum of Armenia (SEMA), it was possible to transfer to the museum a collection of weaponry tools and accessories, the most valuable of which is traditional two-handed furs brought from Karin in 1830. The brothers Mkrtich and Hovhannes Ayvazyan, who settled in Akhaltsikhe, were inseparable and the locals called them Chiftalar (pair, twin), hence the new form of their surname Chiftalarians. In addition to the Chiftalarians, other tribal gunsmiths who enjoyed great prestige in the Ottoman Empire settled in Akhaltsikhe, the most notable of which was the incomparable master of bladed weapons, Gevorg Burunsuzyan. The first representative of the Chiftalaryan dynasty, who gained great fame in Russia and abroad, was Mkrtich (senior) Chiftalaryan, who presented the firearms he made at the world exhibitions in London in 1862 and in Paris in 1867 and was awarded a gold medal. The work of the elder Chiftalaryan was continued by his sons Hakob and Yeghishe. The latter was not long engaged in weapons business and began to get involved in the invention of various mechanical devices, from which a device for squeezing honey - a mechanical centrifuge - received an award at an international exhibition and was patented. Hakob Chiftalaryan remained faithful to his father's craft and, together with his two sons, Pashik and Aram, adapted a Zinger brand sewing machine for making cartridge cases during the Turkish siege of Akhaltsikhe. The last active gunsmith of the dynasty was Pashik Chiftalaryan, who was also a highly skilled locksmith, mechanical repairer, highly artistic gold and silversmith and engraver. The most eloquent evidence of the talented gunsmith and inventor Pashik Chiftalaryan was awarded him 300 rubles by order of the Chief Marshal of Artillery of the USSR N. N. Voronov dated December 14, 1944 "for an invention in the field of improving artillery weapons." According to master Pashik, it was about improving the howitzer bolt.



**ՀԱՅՈՑ ԱՂԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՂԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱԿՐԹԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1978-2004ԹԹ.**

Ալվարդ Գրիգորյան

Խ. Արքովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի  
Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դոցենտ,  
մանկ. գիտ. թ., Խ. Արքովյանի անվան ՀՊՄՀ պատմության թանգարանի տնօրեն  
aspumuseum@gmail.com

**Հիմնաբառեր.** կրթական հարացույցեր, գաղափարական զենք, տեղեկատվական համա-  
կարգ, թանգարանային հաղորդակցություն, երկխոսություն, կրթադաստիարակչական ծրագրեր:

1978-1990-ական թվականներին Հայաստանում այցելուների համար նախատեսված կր-  
թական բազմաշերտ ծրագրերի կազմակերպման յուրատիպ դպրոցի էր վերածվել Հայաստանի  
ազգագրության պետական թանգարանը, որը հայտնի էր այցելուների տարիքային ու սոցիալա-  
կան տարբեր շերտերի համար իրականացվող բազմաբնույթ և բովանդակալից կրթական աշ-  
խատանքով, ինչի շնորհիվ էլ 1980-ական թվականներին մտնում էր խորհրդային թանգարան-  
ների լավագույն հնգյակի մեջ: Այն դարձել էր Հոկտեմբերյանի (այժմ՝ Արմավիրի մարզ) շրջանի  
մշակութային կենտրոն: Տարբեր դպրոցներում, տեխնիկումներում, հիմնարկներում, զորամա-  
սերում և գյուղերում թանգարանը կազմակերպում էր «Կուլտուրայի ժողովրդական համալսա-  
րանի» դասընթացներ, կինոլեկտորիումներ, ակումբներ, խմբակներ և այլն:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունում՝ 1988թ. աղետաբեր երկրաշարժից հե-  
տո, Արցախյան պատերազմի, շրջափակման, էներգետիկ և տնտեսական ճգնաժամերի տարի-  
ներին (1991-1995թթ.) թանգարանները հայտնվեցին բարդ կացության մեջ, քանզի դժվար էր  
իրականացնել կրթական ծրագրեր նվազագույն ֆինանսավորման և ազգաբնակչության սո-  
ցիալ-հոգեբանական բարդ պայմաններում: Թանգարանների գերխնդիրը հավաքածուներն ու  
շենքերը պահպանելն էր: Թանգարանային մնացյալ գործառույթները մղվել էին երկրորդ պլան:

Հետագա տարիներին թանգարանային ոլորտի գործունեության բարելավումն ու թանգա-  
րանների դերի բարձրացումը նպաստեցին թանգարանում մշակութակրթական ծրագրերի ակ-  
տիվացմանը:

**КУЛЬТУРНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ НАЦИОНАЛЬНОГО  
МУЗЕЯ АРМЯНСКОЙ ЭТНОГРАФИИ В 1978-2004 ГГ.**

Алвард Григорян

доцент кафедры музейного дела, библиотековедения и библиографии Армянского  
государственного педагогического университета им. Х. Абовяна, канд. пед. наук,  
директор Музея истории АГПУ им. Х. Абовяна  
aspumuseum@gmail.com

**Ключевые слова:** образовательные модели, идеологическое оружие, информационная  
система, музейная коммуникация, диалог, образовательные программы.

В 1978-1990 годах Государственный музей этнографии Армении превратился в уникальную  
школу по организации многоуровневых образовательных программ, известную своей разноплано-  
вой и содержательной воспитательной работой для посетителей разного возраста и разных со-

циальных слоев, благодаря чему в 1980-х годах он вошел в пятерку лучших музеев Советского Союза. Он стал культурным центром Октемберяна (ныне Армавирская область). В различных школах, техникумах, учреждениях, воинских частях и селах музей организовывал курсы «Народного университета культуры», кинолектории, кружки, клубы и т.д.

В новой независимой Республике Армения после катастрофического землетрясения, в годы Арцахской войны, блокады, энергетического и экономического кризисов (1991-1995 гг.) музеи оказались в сложном положении, так как при минимальном финансировании и в условиях тяжелого социально-экономического и психологического состояния населения страны трудно было реализовывать образовательные программы. Основной задачей музеев было сохранение коллекций и зданий. Остальные музейные функции отошли на второй план.

В последующие годы совершенствование деятельности музейного сектора и повышение роли музеев способствовало активизации культурно-просветительских программ в музее.

## CULTURAL AND EDUCATIONAL ACTIVITIES OF THE NATIONAL MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY IN 1978-2004

Alvard Grigoryan

Associate Professor of the Department of Museum Affairs, Library Science and  
Bibliography of the Armenian State Pedagogical University after  
Kh. Abovyan, Ph.D., Director of the Museum of History of ASPU after Kh. Abovyan  
aspumuseum@gmail.com

**Key words:** educational models, ideological weapon, information system, museum communication, dialogue, cultural and educational programs

In 1978-1990, the State Museum of Ethnography of Armenia turned into a unique school for organizing multi-level educational programs, known for its diverse and meaningful educational work for visitors of different ages and social strata, thanks to which in the 1980s it entered the top five museums of the Soviet Union. It became the cultural center of Hoktemberyan (now Armavir region). In various schools, technical schools, institutions, military units and villages the museum organized courses of the "People's University of Culture", film lectures, circles, clubs, etc.

In the newly independent Republic of Armenia, after the catastrophic earthquake, during the years of the Artsakh war, blockade, energy and economic crises (1991-1995) museums found themselves in a difficult situation, since with minimal funding and in the conditions of a difficult socio-economic and psychological state of the population of the country it was difficult to implement educational programs. The main task of museums was to preserve collections and buildings. Other museum functions faded into the background.

In subsequent years, the improvement of the activities of the museum sector and the enhancement of the role of museums contributed to the activation of cultural and educational programs in the museum.

**ԹԱՆԳԱՐԱՆԻ «ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՐՔԸ» ՈՐՊԵՍ  
ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐ  
(ԸՍՏ «ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ»-Ի ՆՅՈՒԹԵՐԻ)**

Լիաննա Գևորգյան

ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր ֆոնդապահ, ՀՊՄՀ թանգարանգիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.  
e-mail: glp61@mail.ru

**Հիմնաբաներ՝** «Տպավորությունների գրքեր», թանգարան, այցելու, գրառում, պատմական հիշողություն, գործառույթ, հույզեր

Յուրաքանչյուր թանգարանում կան «Տպավորությունների գրքեր»: Դրանք լավ թե վատ են կազմված, այցելուների կողմից պահանջված են, թե ոչ, բոլոր դեպքերում դրանք կան: Իսկ ո՞ւմ կամ ինչի՞ համար են այդ գրքերը: Փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ թանգարանի աշխատակիցները հազվադեպ են թերթում դրանք, առավել ևս վերլուծում գրառումները: Այսպիսով, գրառումները մնում են չգնահատված պատմական աղբյուր, մինչդեռ դրանք կարևոր սկզբնաղբյուր են թանգարանագիտական ուսումնասիրությունների համար, պարունակում են տեղեկատվության տարբեր շերտեր, որոնք կարող են հետաքրքրել ոչ միայն թանգարանագետներին և թանգարանների պատմության հետազոտողներին, սոցիոլոգներին, շուկայագետներին, այլև գրաֆոլոգներին, հոգեբաններին, փիլիսոփաներին, պատմաբաններին:

Թանգարանն իր բնույթով ստեղծված է պատմական հիշողությունը պահպանելու համար, տպավորությունների գրքերը այդ գործընթացի անբաժանելի մասն են: «Տպավորությունների գրքի» գոյությունը վկայում է այն մասին, որ թանգարանը փակ համակարգ չէ: Տպավորությունների գրքերի գրառումներն արտահայտում են նաև մարդկանց զգացողությունները, հոգեվիճակն ու վերաբերմունքը ինչպես մշակույթի, այնպես էլ տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունների վերաբերյալ:

Այսօր այդ դերը փորձում են կատարել նաև թանգարանի կայքում կամ սոցցանցերում կատարված գրառումները:

Հայոց ազգագրության թանգարանի գիտական արխիվում պահվում են «Տպավորությունների գրքի» բազմաթիվ հատորներ, որոնց գրառումները տեղեկություն են պարունակում ոչ միայն թանգարանի ցուցադրության և էքսկուրսիոն աշխատանքների վերաբերյալ, այլև արտահայտում են տվյալ ժամանակաշրջանի տրամադրությունները, պատմական իրադարձությունների վերաբերյալ դիտարկումները, ինչպես նաև առաջարկություններ և ցանկություններ: Մեր կողմից ուսումնասիրվել է Հայոց ազգագրության թանգարանի «Տպավորությունների գրքում» տարբեր լեզուներով շուրջ 350 գրառում՝ կատարված տարբեր ազգությունների, սոցիալական, տարիքային խմբերի ներկայացուցիչների կողմից, որոնք վերլուծվել և դասակարգվել են՝ ըստ թեմատիկ խմբերի:

## «КНИГА ОТЗЫВОВ» МУЗЕЯ КАК ПЕРВОИСТОЧНИК ДЛЯ НАУЧНЫХ ИССЛЕДОВАНИЙ (ПО МАТЕРИАЛАМ МУЗЕЯ ЭТНОГРАФИИ АРМЯН)

Лианна Геворгян

«Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников» ГНКО  
МОНКС, главный хранитель, Кафедра музееведения, библиотековедения и библиографии  
АГПУ, доцент, канд. ист. наук  
e-mail: glp61@mail.ru

**Ключевые слова:** «Книги отзывов», музей, посетитель, запись, историческая память, функции, переживания

В каждом музее есть «Книги отзывов». Они хорошо или плохо оформлены, востребованы посетителями или нет, но они есть. Но для кого или чего они существуют? Опыт показывает, что даже сотрудники музеев редко их просматривают, не говоря уже об анализе записей. Таким образом книги отзывов остаются недооцененным историческим первоисточником. Между тем, книги содержат разные пласты информации, которые могут быть интересны не только социологам, маркетологам и исследователям истории музеев, но и графологам, психологам, философам.

Музей, как институт хранения исторической памяти, хранит и книги отзывов. Сам факт, что в музее есть книга отзывов, говорит о том, что музей это не закрытая система. Записи в книге отзывов также отображают чувства, душевное состояние и отношение людей как к культуре, так и к событиям данного периода.

Сегодня эту роль пытаются выполнять также посты на сайте музея или в социальных сетях.

В архиве Музея этнографии армян хранятся несколько томов «Книги отзывов», записи которых содержат информацию не только об экспозиционно-экскурсионной работе музея, но и выражают настроения данного периода, отношение к историческими событиями, а также предложения и пожелания. Нами изучено около 350 записей в «Книге отзывов» Музея этнографии армян на разных языках, сделанных представителями разных национальностей, социальных и возрастных групп, которые были проанализированы и классифицированы по тематическим группам.

## "VISITOR IMPRESSION BOOK" OF THE MUSEUM AS A PRIMARY SOURCE FOR SCIENTIFIC RESEARCH (BASED ON THE MATERIALS OF THE MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY)

Lianna Gevorgyan

Associate Professor of the Department of Museology and library science ASPU,  
Chief Curator of "Service for the Protection of Historical Environment and Cultural  
Museum-Reservations" NCSO, Ph.D in History  
e-mail: glp61@mail.ru

**Key words** –"Visitor Impression Books", museum, visitor, record, historical memory, functions, experiences

Every museum has "Visitor Impression Books". No matter how well or poorly they are decorated, in demand by visitors or not, they are there. But who or what do they exist for? Experience shows that even museum staff rarely look through them, much less analyze the records, which, as a

result remain an underestimated historical primary source. Meanwhile, the books are significant for the museological research and they contain different layers of information that may be of interest not only to sociologists, marketers, museologists and researchers of the history of museums, but also to graphologists, psychologists, philosophers and historians.

The museum, as an institute for the preservation of historical memory, also stores visitor impression books. The very fact that the museum has that kind of book suggests that it is not a closed system. The records in the book also reflect the feelings, state of mind and attitude of people both to the culture and to the events of the given period.

Today, posts on the museum's website or on social networks also try to act as a kind of visitor impression book.

The archive of the Museum of Armenian Ethnography stores several volumes of the "Visitor Impression Books". The records in them contain information not only about the excursions and exhibitions of the museum, but they also express the mood of that period, attitude to historical events, suggestions and wishes. We have studied about 350 records in the "Visitor Impression Books" of the Museum of Armenian Ethnography. They are in different languages, made by representatives of different nationalities, social and age groups, which were analyzed and classified into thematic groups.

## **ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ԲԱՑ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ ՀԵՏԱՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՓՈՐՁ)**

Սվետլա Դիմիտրովա

Գաբրովոյի բացօթյա թանգարանի տնօրեն, պրոֆեսոր

**Հիմնաբաներ՝** թանգարաններ, հետսոցիալիստական շրջան, բուլղարական փորձ, բարեփոխումներ, նոր օրենք, մշակութային ժառանգություն, սահմանների բացում:

Անցած հազարամյակի վերջում Արևելյան Եվրոպայի պետություններն ընդգրկվում են քաղաքական, հասարակական, տնտեսական և մշակութային կյանքի վերակառուցման գործընթացներում: Բուլղարիայում փլուզվել է կառավարման սոցիալիստական համակարգը: Երկկուսակցական վարչակարգը փոխարինվել է բազմակուսակցականով, իսկ տոտալիտար կառույցները՝ ժողովրդավարականով: Բարեփոխումների է ենթարկվել նաև թանգարանային ոլորտը: Ընդունվել է մշակութային ժառանգության մասին նոր օրենք, փոխվում է թանգարանային ցանցի կառուցվածքը, ստեղծվում են մասնավոր թանգարաններ, փակվում են սոցիալիստական բնույթի ցուցադրությունները:

Բուլղարիան ունի մեկ բացօթյա թանգարան և շատ հնագիտական պեղավայրեր: Հետսոցիալիստական ժամանակաշրջանում (քսաներորդ դարի 90 - ականներ-XXI դարի 20-ականներ)՝ շուկայական հարաբերությունների և նոր օրենսդրության արդյունքում, ամեն ինչ ենթարկվում է փոփոխությունների: Մասնավոր նախաձեռնությունների և Եվրոմիության կողմից ֆինանսավորման արդյունքում ստեղծվում են նոր բացօթյա ցուցադրություններ: Դրանք անվանվում են թանգարաններ, թեև դրանց մի մասը այդպես կոչվելու իրավունք չունի, քանի որ գրանցված չի Մշակույթի նախարարությունում: Հետսոցիալիստական շրջանում բացօթյա թանգարանները շարունակում են վայելել այցելուների մեծ հետաքրքրվածությունը: Սակայն սահմանների բացումը ստիպում է նրանց իրականացնել մշտական նորամուծություններ, որպեսզի դառնան մրցունակ ժամանակակից գլոբալ աշխարհում:

## МУЗЕИ ПОД ОТКРЫТЫМ НЕБОМ В ПОСТСОЦИАЛИСТИЧЕСКОМ ПЕРИОДЕ (БОЛГАРСКИЙ ОПЫТ)

Светла Димитрова, профессор  
Директор Музея под открытым небом в Габрово

**Ключевые слова:** музеи, постсоциалистический период, болгарский опыт, реформы, новый закон, культурное наследие, открытие границ.

В конце прошедшего тысячелетия государства в Восточной Европе охвачены процессами перестройки политической, общественной, экономической и культурной жизни. В Болгарии распалась социалистическая система управления. Двухпартийный режим заменен многопартийным, тоталитарные структуры – демократическими. Реформы затрагивают и музейное дело. Принят новый закон о культурном наследии, меняется структура музейной сети, создаются частные музеи, закрываются экспозиции, посвященные социалистическому развитию.

В Болгарии есть один музей под открытым небом и много археологических объектов. В постсоциалистический период (90-ые годы XX века – 20-ые годы XXI века) все они проходят через перемены в следствие рыночных условий и нового законодательства. В результате частных инициатив и финансирования со стороны Европейского союза создаются новые экспозиции под открытым небом. Они называются музеями, но некоторые из них не имеют на это никакого права, так как у них нет необходимой регистрации в Министерстве культуры. В постсоциалистическом периоде музеи под открытым небом продолжают пользоваться большим интересом со стороны посетителей. Открытие границ однако заставляет их вводить постоянно новшества, чтобы быть конкурентоспособными в современном глобальном мире.

### OPEN-AIR MUSEUMS IN THE POST-SOCIALIST PERIOD (BULGARIAN EXPERIENCE)

Svetla Dimitrova, Prof.  
Director of The Open- Air Ethnographic Museum in Gabrovo

**Key words:** museums, post-socialist period, bulgarian experience, reforms, new law, cultural heritage, opening of borders.

At the end of the last millennium, the States in Eastern Europe were involved in the processes of restructuring political, social, economic and cultural life. The socialist system of government collapsed in Bulgaria. The two-party regime was replaced by a multiparty one, and totalitarian structures were replaced by democratic ones. The reforms affected the museums as well. A new law on cultural heritage was adopted, the structure of the museum chains was changed, private museums were created, exhibitions dedicated to socialist development were closed.

There is one open-air museum and many archaeological sites in Bulgaria. In the post-socialist period (the 90s of the XX century – the 20s of the XXI century), they all went through changes as a result of market conditions and new legislation. Due to private initiatives and funding from the European Union, new open-air exhibitions were held. They are called museums, but some of them have no right to do so, since they do not have the necessary registration in the Ministry of Culture. In the post-socialist period, open-air museums keep being greatly enjoyed by visitors. The opening of borders, however, forces them to constantly innovate in order to be competitive in today's global world.

**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ  
ԲՆՈՐՈՇ ԳՈՐԳԵՐԻ ՏԻՊԵՐԸ /XIX-XX Դ. ՍԿԻԶԲ/**

Աշխունջ Պողոսյան  
Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն,  
փորձագետ, պ.գ.թ.  
ashkhunjoghosyan@gmail.com

**Հիմնաբառեր՝** Վասպուրական, ժողովրդագրություն, վարդակավոր գորգ, բուսածաղկային հորինվածք, «կենաց ծառ», նշանախաչ, միջնաթել, կրկնակի հանգույց:

Սույն զեկուցման մեջ հնարավորինս բացահայտված են Վասպուրականի գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերի տիպերն ու դրանց տարածման արեալները: Այդ նպատակով հետազոտվել են տարածաշրջանի պատմագագաթական նկարագրին վերաբերող գրականությունն ու սկզբնաղբյուրները և մեր ձեռքի տակ եղած առաջավորասիական գորգագործական մշակույթին վերաբերող ուսումնասիրությունները: Խնդրո առարկա հարցադրումների բացահայտման հարցում հատկապես կարևորել ենք Հայոց ազգագրության թանգարանի գորգերի, ինչպես նաև այլ թանգարաններում և անհատ քաղաքացիների մոտ պահվող գորգերի հավաքածուները:

Մեզ հետաքրքրող հարցադրումների պարզաբանման համար համառոտակի դիտարկվել են նաև տարածաշրջանում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացներն ու նաև ներկայացրվել դրանց պատմամշակութային հետևանքները: Մասնավորապես անդրադարձ է արված XIX դարում տարածաշրջանի բնակչության կազմում մեծամասնություն կազմած քրդական ցեղերին բնորոշ գորգագործական ավանդույթներին: Այդ բոլորի պատմահամեմատական համադրումը հնարավորություն է ընձեռել որոշակի պատկերացում կազմել Վասպուրականի հայոց գորգագործական կենտրոններին բնորոշ տեխնիկատեխնոլոգիական, գեղազարդման համակարգերի տարրերի ու գուներանգների հետ կապված ավանդույթների մասին: Հնարավորինս պատմահամեմատական հետազոտություններ ենք իրականացրել նաև քրդական գորգագործական մշակույթի ավանդույթների վերաբերյալ: Նախնական հետազոտությունների արդյունքում արված բացահայտումներից ելնելով ու նաև հաշվի առնելով զեկուցման ծավալային հնարավորությունները, նպատակահարմար ենք գտնում այստեղ ներկայացնել միայն բուսածաղկային հորինվածքներով գեղազարդված գորգերի տիպերը: Ընդհանուր առմամբ դրանք չորսն են, ունեն նաև տարբերակներ և հնարավորություն են տալիս պատկերացում կազմել այդ խմբին պատկանող վասպուրականյան գորգերի առանձնահատկությունների մասին: Բացահայտված է նաև արտերկրի գորգագետների կողմից խնդրո առարկա տարածաշրջանում ստեղծված գորգերի մի սովոր մասին քրդական ծագում վերագրելու տեսակետների անհիմն լինելն ու ընդհանրապես այդտեղ ձևավորված գորգագործական մշակույթի ավանդույթներում հայոց ունեցած առանցքային դերի անտեսումը:

## ТИПЫ КОВРОВ В КОВРОТКАЦКИХ ЦЕНТРАХ ВАСПУРАКАНА /XIX- НАЧ. XX ВВ./

Ашхундж Погосян  
Экспертный центр культурных ценностей,  
эксперт, канд. исторических наук  
ashkhunjoghosyan@gmail.com

**Ключевые слова:** Васпуракан, ковер с розетками, растительно-цветочный узор, «древо жизни», миндалевидный узор, уток, двойной узел.

В данной статье выявлены типы ковров, характерных для центров ковроткачества Васпуракана, и, по возможности, представлены ареалы их распространения. С этой целью исследованы соответствующие источники и научная литература, относящиеся к историко-этнографическому описанию региона, и вообще, исследования по традиционному ковроткачеству Передней Азии. Как первоисточники особую значимость имеют коллекции ковров Музея этнографии Армении и других музеев Армении, а также ковры хранящиеся у частных коллекционеров.

Для раскрытия интересующих нас вопросов рассмотрены демографические процессы, происходившие в регионе, а также представлены их историко-культурные последствия. Особо были затронуты традиции ковроделия, характерные для курдских племен, составлявших в XIX веке большинство населения данного региона. Историко-сравнительное сопоставление разнородных фактов позволило нам составить определенное представление о традициях, связанных с технико-технологическими особенностями, декоративно-композиционной системы и цветовой гаммы, характерных для ковроткацких центров Васпуракана. По мере возможности, мы также провели историко-сравнительные исследования традиций ковроткачества курдских племен. Основываясь на выводах, сделанных в результате предварительных исследований, а также принимая во внимание объем статьи, считаем целесообразным представить здесь только типы ковров с растительно-цветочными композициями. В целом, нами выделены четырнадцать типов этой группы, которые дают возможность составить определенное представление об особенностях ковроткачества Васпуракана. В статье также раскрывается необоснованность мнений зарубежных ковроведов, приписывающих курдское происхождение коврам, созданным в рассматриваемом регионе, и вообще игнорирующих ключевую роль армян в сложившихся там традициях ковроткацкой культуры.

## TYPES OF CARPETS CHARACTERISTIC TO THE CARPET-MAKING CENTERS OF VASPURAKAN /XIX-XX centuries/

Ashkhunj Poghosyan  
Expert Center of Cultural Values, expert, PhD in history  
ashkhunjoghosyan@gmail.com

**Key words:** Vaspurakan, demographics, rosette carpet, floral composition, "tree of life", Boteh pattern, weft, double knot.

This article reveals the types of carpets typical of Vaspurakan carpet centers and their areas of distribution. For this purpose, the literature and sources related to the historical-ethnographic des-



cription of the region and the studies related to the Near East Asian carpet culture were investigated. In this process, we have given particular importance to the carpet collections of the Museum of Armenian Ethnography, as well as carpet collections kept in other museums and by private owners.

In order to clarify the issues of interest, the demographic processes that took place in the region and their historical and cultural consequences were also briefly studied. The carpet-making traditions characteristic of the Kurdish tribes, which formed the majority of the region's population in the 19th century, were specifically addressed. The historical and comparative comparison of all of them has made it possible to get a certain idea about the traditions related to the technical-technological, decoration system elements and colors characteristic of the Armenian carpet-making centers of Vaspurakan. We have also carried out historical and comparative research on the traditions of Kurdish carpet weaving culture. Based on the findings made as a result of preliminary research and also taking into account the scope of the article, we consider presenting only the types of carpets decorated with floral designs. In general, there are four of them and they have different types. They give an opportunity to get an idea about the features of the Vaspurakan carpets belonging to the group. The article also reveals the groundlessness of the opinions of foreign carpet experts attributing a Kurdish origin to some of the carpets created in the region in question, and generally ignoring the key role played by Armenians in the traditions of the carpet-making culture formed there.

## **ԲԱՐՍԵՂ ԹՈՒՂԱՃՅԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ**

Գալյա Դավիդովա

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, բաժնի վարիչ  
galya.davidova.60@gmail.com

**Հիմնաբառեր**<sup>1</sup> հավաքածու, կոնդակ, կաթողիկոս, արքեպիսկոպոս, Պատրիարքարան, թանգարան, եկեղեցական:

Հայոց ազգագրության թանգարանում պահպանվում է թուրքահայ բանասեր, բառարանագիր Բարսեղ Միքայելի Թուղլաճյանի (1933-2016) հավաքածուն: Նրա գրական անունն է Փարս Թուղլաչի:

Բարսեղ Թուղլաճյանի հավաքածուն շատ հարուստ և արժեքավոր է: Այն բաղկացած է հազար վեց հարյուրից ավելի հայերեն (հայ գրողների ստեղծագործություններ, հայ մշակույթի, հայկական գավառների պատմության, հայ իրավունքի և իրավաբանության վերաբերյալ) և 830-ից ավելի օտարալեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն, թուրքերեն) գրքերից, գրքույկներից, կրթության և վարժարանների վերաբերյալ նյութերից, ինչպես նաև մի քանի տասնյակից ավելի արժեքավոր փաստաթղթերից: Հավաքածուի ուշագրավ փաստաթղթերից են պատմական, մշակութային արժեք ունեցող, բնօրինակ եկեղեցական (23) կոնդակները: Այս կոնդակներից մի քանիսն ուղղված են Կոստանդնուպոլսի Պատրիարքին, Տեղապահ Տ. Գևորգ Արքեպիսկոպոս Արսլանյանին: Պատմական նշանակության այս ուղերձները Տ. Գևորգ Արքեպիսկոպոս Արսլանյանի ձեռամբ է հասել Բ. Թուղլաչյանին: Դրանք գրված են աստվածաբաններ, հայագետներ, Առաքելական եկեղեցու մեծ տեսաբաններ, հայոց եկեղեցու նվիրյալներ, Ամենայն Հայոց կաթողիկոսներ Գևորգ Ե Սուրենյանցի, Գևորգ Զ Չորեքյանի, Վազգեն Ա Բուխարեստցու, Մեծի Տանն Կիլիկիոյ Ամենայն

Հայոց կաթողիկոս Սահակ Բ Խապայանի, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի, Մաղաքիա պատրիարք Օրմանյանի, Պողոս վարդապետ Մարուշյանի կողմից: Ամենահները 1845թ.(Կ. Պոլսի պատրիարքարանի Պողոս վարդապետ Մարուշյանի) և 1899թ. (Մաղաքիա պատրիարք Օրմանյանի) կոնդակներն են: Կան և՛ ձեռագիր և՛ տպագիր հայրապետական թղթեր: Դրանք գեղազարդված են հայկական մանրանկարչության ոճով և Հայոց եկեղեցուն բնորոշ խորհրդանիշներով (զավազան, խույր, խաչ)՝ հաճախ առկա է կաթողիկոսի կնիքը:

200-ից ավելի լուսանկարների շարքում կա արժեքավոր մի լուսանկար, որտեղ Գևորգ Ե Սուրենյանցն է ժամանակաշրջանի հայ հոգևորականների վերնախավի, ինչպես նաև եկեղեցու բարերարների հետ:

Այս նյութերը կարևոր համալրում են ՀԱԹ-ի «Փաստաթուղթ» և «Լուսանկար», ինչպես նաև թանգարանի գրադարանային հավաքածուներում:

## ИСТОРИКО-КУЛЬТУРНОЕ ЦЕННОСТЬ КОЛЛЕКЦИИ БАРСЕГА ТУГЛАДЖЯНА

Галя Давыдова

Мемориальный комплекс Сардарпатской битвы, Национальный музей этнографии и истории освободительной борьбы армян, зав. отделом  
galya.davidova.60@gmail.com

**Ключевые слова:** коллекция, кондак, Католикос, Архиепископ, Патриархат, музей, церковный.

В Музее этнографии армян хранится коллекция турецкого армянина, филолога, лексикографа Барсега Микаеловича Тугладжяна (1933-2016). Его псевдоним - Парс Туглачи.

Коллекция Барсега Туглачяна очень богата и ценна. Она состоит из более чем 1600 книг на армянском языке (произведения армянских авторов об армянской культуре, истории армянских провинций, армянском праве и юриспруденции) и 830 книг на иностранных языках (английском, французском, немецком, русском, испанском, итальянском, персидском, турецком), брошюры, данных об образовании и гимназиях, а также десятков ценные документы.

Наиболее примечательными документами коллекции являются подлинные церковные кондаки (официальное послание армянского католикоса), представляющие историческую и культурную ценность. Ценными образцами коллекции Барсега Тугладжяна являются подлинные церковные кондаки (23). Некоторые из этих кондаков адресованы и посвящены Патриарху Константинополя, наместнику Архиепископу Геворгу Арсланяну. Эти документы исторического значения передал Б. Тухлачи Архиепископ Геворг Арсланян. Они были написаны богословами, арменоведами, великими теоретиками Апостольской церкви, приверженцами Армянской Церкви, католикосами Всех Армян Геворгом V Суренянцем, Геворгом VI Чорекчяном и Вазгеном I Бухарестским, Католикосом Всех Армян Великого Дома Киликийского Сааком II Хапаяном, армянским патриархом Константинополя архиепископом Егише Дуряном, патриархом Магакией Орманяном, архимандритом Погосом Марушяном. Самыми старыми из них являются кондак 1845г. (написанный архимандритом Константинопольского патриархата Погосом Марушяном) и кондак 1899г. (написанный патриархом Малахией Орманяном). Есть как рукописные, так и печатные кондаки. Они проиллюстрированы в стиле армянских миниатюр и символов, характерных для Армянской церкви (посох, митра, крест), часто с печатью Католикоса.

Среди более чем 200 фотографий есть одна ценная фотография, на которой изображен Геворг V Суренянц с элитой армянского духовенства того времени, а также с благотворителями церкви. Эти материалы являются важным дополнением к "Документ" и "Фото", а также к библиотечным коллекциям музея.

## HISTORICAL -CULTURAL VALUE OF THE BARSEGH TUGLADJIAN COLLECTION

Galya Davydova

Memorial complex of Sardarapat battle, National museum of Armenian ethnography and history of the liberation struggle, Head of Department  
galya.davidova.60@gmail.com

**Key words:** collection, kondak, Catholicos, Archbishop, Patriarchate, museum, ecclesiastical

The Museum of Armenian Ethnography houses a collection of Turkish Armenian philologist, lexicographer Barsegh Mikael Tughladjyan (1933-2016). His pseudonym is Pars Tughlachi.

The collection of Barsegh Tughladjyan works is very rich and valuable. It consists of more than 1600 Armenian (works by Armenian authors about Armenian culture, history of Armenian provinces, Armenian law and jurisprudence) and 830 foreign-language (English, French, German, Russian, Spanish, Italian, Persian, Turkish) books, brochures, data on education and gymnasiums and dozens of valuable documents.

Among the most notable documents of the collection are the original copies of church kontakia which are of historical and cultural value. The valuable items in the collection of Barsegh Tughladjyan are the 23 original copies of church kontakia. Some of those kontakia are addressed and dedicated to the Patriarch of Constantinople, Vicar Archbishop Gevorg Arslanyan. These documents of historical significance were handed over to B. Tughladjyan by Archbishop Gevorg Arslanyan. They are written by theologians, Armenologists, great theorists of the Apostolic Church, adherents of the Armenian Church, Catholicoi of All Armenians Gevorg V Surenyants, Gevorg VI Chorekchyan, Vazgen I, Catholicos of Cilicia of the Armenian Apostolic Church Sahak II Khabayan, Armenian Patriarch of Jerusalem Archbishop Yeghishe Duryan, Armenian Patriarch of Constantinople Malachia Ormanyan and Archimandrite Poghos Marushyan. The oldest among them are the kontakia by Archimandrite of the Patriarchate of Constantinople Poghos Marushyan written in 1845 and by Patriarch Malachia Ormanyan written in 1899. There are both handwritten and printed kontakia. They are illustrated in the style of Armenian miniatures and symbols characteristic of the Armenian Church (staff, mitre, cross) often with the seal of the Catholicos.

Among more than 200 photographs there is a valuable photo depicting Gevorg V Surenyants together with the elite of the Armenian clergy of that time, as well as with benefactors-manufacturers and trustees of the church.

These items are a significant complementation to the "Document" and "Photo", as well as library collections of the museum.

**ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԽԱՉԿԱՐ  
ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ**

Կարինե Բազեյան  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,  
ավագ գիտաշխատող, պ.գ.թ.  
bazeyan60@mail.ru

**Հիմնարաներ**<sup>1</sup> ասեղնագործություն, տեխնիկատեխնոլոգիական, հավաքածու, թանգարան, խաչկար, կենցաղային առարկաներ, Շիրակ, Ջավախք

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանն ունի ասեղնագործ աշխատանքների մեծաթիվ և հետաքրքիր հավաքածու, որը թվագրվում է XVIII-XX դարերով և ընդգրկում է Հայաստանի գրեթե բոլոր պատմա-ազգագրական շրջաններն իրենց ողջ տեսականիով: Տեխնիկատեխնոլոգիական առումով այստեղ ներկայացված են հայկական ասեղնագործության մեջ հայտնի բոլոր կարատեսակները, գործառությանին առումով՝ կիրառական ողջ բազմազանությունը: Ցավոք թանգարանի ասեղնագործության հարուստ հավաքածուն դեռևս ըստ արժանվույն չի ուսումնասիրվել ու լուսաբանվել: Այդ բացը լրացնելուն է ուղղված սույն հոդվածը, որը վերաբերում է դրա մի հատվածի՝ զուտ խաչկարով արված բանվածքների վերլուծությանը:

Զեկուցումը նվիրված է խաչկարով արված ասեղնագործ աշխատանքներին, որոնք ներկայացվելու են հիմնվելով դրանց ժամանակագրական, ծագումնաբանական, կիրառական, գեղազարդման առանձնահատկություններին: Ժամանակագրական առումով հավաքածուում մեծ թիվ են կազմում XIX դ. վերջի և XX դ. սկզբների բանվածքները: Տարածված լինելով պատմական Հայաստանի բոլոր ազգագրական շրջաններում, XIX դարի վերջին- XX դարի առաջին կեսին առանձնապես գործածվել է Շիրակում և Ջավախքում: Ըստ առարկայական բաժանման առանձնացրել ենք տարբեր չափերի պատի դեկորատիվ զարդերը կամ սրահակները, այդ թվում գորգանման ասեղնագործությունները, բարձերի/թիկնաբարձերի (մութաքա) երեսները, աթոռի բարձիկները, ասեղի բարձիկները, սփռոցները, անձեռոցիկները, տարաբնույթ այլ ծածկոցները, վարագույրները, մաշիկի երեսները, հագուստի ասեղնագործ մասերը, կանանց ավանդական տարազամասերը և մի քանի այլ կենցաղային փոքրիկ առարկաներ: Խաչկարով արված բանվածքների մեջ դրսևորվում են հայկական ավանդական ասեղնագործության, գորգագործության ու կարպետագործության ամենասերտ աղերսներն ու ընդհանրությունները:

**КОЛЛЕКЦИЯ ВЫШИВОК КРЕСТОМ АРМЯНСКОГО ЭТНОГРАФИЧЕСКОГО МУЗЕЯ**

Карине Базеян  
Ширакский центр арменоведческих исследований НАН РА,  
старший научный сотрудник, к.и.н.  
bazeyan60@mail.ru

**Ключевые слова:** вышивка, технико-технологический, коллекция, музей, вышивка крестом, бытовые предметы, Ширак, Джавахк.

Мемориал Сардарapatской битвы, Национальный музей этнографии и истории освободительной борьбы Армении располагают большой и интересной коллекцией рукоделия, которая

восходит к XVIII-XX векам и охватывает почти все историко-этнографические регионы Армении в их полном объеме. С технико-технологической точки зрения здесь представлены все разновидности швов, известные в армянской вышивке, с функциональной точки зрения - все разнообразие применения. К сожалению, богатая музейная коллекция рукоделия еще не изучена и не освещена должным образом. Доклад посвящен текстильным изделиям, вышитым крестом, которые будут представлены по их хронологическим, генеалогическим, прикладным, декоративным признакам.

С хронологической точки зрения в коллекции большое количество образцов относятся к концу XIX - началу XX века. Будучи широко распространенными во всех этнографических районах исторической Армении, в конце XIX и первой половине XX века они особенно использовались в Шираке и Джавахке. С предметной точки зрения мы выделили декоративные настенные украшения или салфетки разных размеров, в том числе ковровые вышивки, подушки/диванные подушки (мутака), подушки для стульев, подушки для булавок и игл, скатерти, платки, различные покрывала, шторы, поверхность тапочек, вышитые части женской одежды, традиционного костюма и некоторые другие мелкие предметы быта.

В тканях, вышитых крестом, проявляются самые характерные черты и общности традиционной армянской вышивки и ковроткачества.

## CROSS-STITCH COLLECTION OF THE ARMENIAN ETHNOGRAPHIC MUSEUM

Karine Bazeyan  
Shirak Armenological Research Center of NAS RA,  
Senior Researcher, Ph.D  
bazeyan60@mail.ru

**Key words:** embroidery, technical-technological, collection, museum, cross-stitch, household items, Shirak, Javakhk.

The National Museum of Ethnography and the History of the Liberation Struggle of Armenia have a large and interesting collection of handicrafts that dates back to the XVIII-XX centuries and covers almost all historical and ethnographic regions of Armenia in their entirety. From a technical and technological point of view, all types of stitches known in Armenian embroidery are presented here, from a functional point of view also all the variety of applications is presented. Unfortunately, the rich museum collection of handicrafts has not yet been studied and adequately covered. The report is devoted to cross-stitch embroidered works, which will be presented according to their chronological, genealogical, applied, decorative features.

From a chronological point of view, a large number of specimens in the collection date back to the late XIX and early XX centuries. Being widespread in all ethnographic regions of historical Armenia, at the end of the 19th and the first half of the XX century they were especially used in Shirak and Javakhk. From a subject point of view, we have identified wall decorations or napkins in various sizes, including carpet embroidery, pillows/sofa cushions (mutaka), chair cushions, pin and needle cushions, tablecloths, handkerchiefs, various bedspreads, curtains, slippers surface, embroidered parts of women's clothing, traditional costume and some other small household items.

In the fabrics embroidered with a cross-stitch, the most characteristic features and commonalities of traditional Armenian embroidery and carpet weaving are manifested.

**ՀԱՉԱՐԱՇԵՆ ՏԱՆԻՔՆԵՐՈՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՑՈՒՄԸ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Կարինե Երիցյան

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և  
ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, գիտաշխատող  
karine.yeritsyan6@gmail.com

**Հիմնաբառեր՝** նյութական մշակույթ, ավանդական բնակելի տուն, հազարաշեն, պատմա-  
մշակութային հուշարձան, հուշարձանացում, ճարտարապետական լուծումներ, զբոսաշրջություն

Ձեկուցման մեջ ներկայացվելու է հայկական ժողովրդական ավանդական տների լայն  
տարածում ունեցող տիպի՝ գլխատան ծածկի՝ հազարաշենի կառուցման առանձնահատկու-  
թյունների և եղանակների, ինչպես նաև պատմազգագրական մարզերում դրանց տարածվա-  
ծության աստիճանը:

21-րդ դարում կենցաղային պայմանների փոփոխման արդյունքում, ինչպես նաև հաշվի  
Լոս-Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի (UCLA)  
Ֆաուլթի թանգարան, համադրող, գիտաշխատող  
gassiaa@arts.ucla.edu gassiaa@arts.ucla.edu

**Հիմնաբաներ**՝ հագույց, օղակ, հայկական արվեստ, ասեղնագործ ժանյակ, մշակութային ժառանգություն, միսիոներական կազմակերպություններ, որբանոցներ



Հանգույց առ հանգույց, օղակ առ օղակ հայկական ասեղնագործ ժանյակը դարեր շարունակ կապել է աշխարհի չորս ծայրերում ապրող հայերին: Արվեստի այս ճյուղը հարյուրամյակների ընթացքում ընդհանուր է եղել տարբեր սերունդների համար:

Ինչպես միտոքոնդրիալ ԴՆԹ-ն է մորից դստերը փոխանցում գենետիկական կառուցվածքը, այնպես էլ ասեղնագործության այս արվեստը դարեր շարունակ մորից դստերն է փոխանցել մշակութային ժառանգությունը և արժեքները: Երբ 1915 թվականի Հայոց ցեղասպանությունից հետո սերունդների փոխանցման կապերը խզվեցին, միսիոներական կազմակերպություններն աշխատակիցներ ուղարկեցին որբանոցներ բացելու և աղջիկներին՝ իրենց գոյատևման համար ժանյակների և ասեղնագործության այլ տեսակների արվեստն ու արհեստը սովորեցնելու:

Արվեստի այս տեսակը միմյանց է կապել հայրենիքի և սփյուռքի հայությանը, ինչպես նաև կապել է սփյուռքահայությանը հյուրընկալած 106 երկրների համայնքների հետ:

Տեքստիլ արվեստի այս տեսակը պատկանում է «ասեղնագործության» կատեգորիային: Այնուամենայնիվ, ժանյակը ուրույն արվեստ է, որում օգտագործվում է ասեղ և թել, մինչդեռ ասեղնագործությունը ասեղով աշխատանքն է հիմք-գործվածքի վրա:

Ֆաուլեր թանգարանը (Fowler Museum at UCLA) 1980 թվականին օրիորդ Մարի Փիլիպոսյանից նվեր ստացավ 14 հայկական ժանեկագործ անձեռոցիկներ: Օրիորդ Փիլիպոսյանի այս հավաքածուն թանգարանին փոխանցվեց UCLA համալսարանի Նարեկացու անվան հայագիտության ամբիոնի ղեկավար՝ պրոֆեսոր Ավետիս Սանջյանի միջնորդությամբ:

## АРМЯНСКОЕ ИСКУССТВО УЗЛОВ И ПЕТЕЛЬ

Касия Армяян

Куратор, научный сотрудник Музей Фаулера UCLA  
gassiaa@arts.ucla.edu gassiaa@arts.ucla.edu

**Ключевые слова:** узел, петля, армянское искусство, игольное кружево, культурное наследие, миссионерские организации, детские дома

Выставка организована Касией Армяян в галерее музея Фаулера (Fowler Museum at UCLA) Калифорнийского университета (UCLA) в Лос-Анджелесе с 23 апреля по август 2023 года.

Узел за узлом, петля за петлей, армянское кружево - “жаняк”, выполненное техникой иголки, на протяжении веков был связывающим звеном для армян, живущих во всех уголках мира. Эта отрасль искусства передавалась из поколения в поколение на протяжении сотен лет.

Подобно тому, как митохондриальная ДНК передает генетическую структуру от матери к дочери, это искусство вышивки, как культурное наследие и ценность, веками передавалось от матери к дочери. После геноцида армян 1915 года, когда были разорваны связи между поколениями, миссионерские организации направили своих работников для открытия детских домов и обучения девочек искусству вышивания иглой и другим видам вышивки, чтобы они могли выжить.

Этот вид искусства соединил армян родины и диаспоры, а также армян диаспоры с общинами 106 стран, которые приютили их.

Этот вид текстильного искусства относится к категории "вышивка" (работа иглой). Однако игольное кружево - это уникальное искусство с использованием иголки и нитки, в то время как вышивка - это работа иглой на тканевой основе.

Музей Фаулера (Fowler Museum at UCLA) в Калифорнийском университете в Лос-Анджелесе в 1980 году получил в дар 14 армянских кружевных салфеток от госпожи Мари Пилипосян. Эта коллекция госпожи Пилипосян была передана музею при посредничестве руководителя кафедры арменоведения им. Нарекаци университета UCLA, профессора Аветиса Санджяна.

## JANYAK: ARMENIAN ART OF KNOTS AND LOOPS

Gassia Armenian

Fowler Museum at UCLA, Curatorial and  
Research Associate Los Angeles, CA  
gassiaa@arts.ucla.edu gassiaa@arts.ucla.edu

**Key words:** knot, loop, Armenian art, needle lace, cultural heritage, Missionary organizations, orphanages

Exhibition curated by Gassia Armenian at the Fowler In Focus Gallery of the Fowler Museum at UCLA from April 23, 2023

Knot after knot, loop after loop, Janyak, Armenian needle lace has been the binding link, for centuries and for generations of Armenians across the four corners of the world. This portable artform has been a multi-generational common denominator throughout centuries. Just as the mitochondrial DNA transmits the genetic structure from mother to daughter, this needle art has transmitted cultural heritage and values, from mother to daughter, throughout centuries. When the generational transmission ties were severed by the Armenian Genocide of 1915, Missionary organizations sent staff to open orphanages and teach the girls the art and craft of needle lace and other types of embroideries for their survival.

This art form has linked the Armenians of the homeland with the Armenians of the Diaspora and in turn it has linked them with their host communities in 106 sovereign countries.

This textile artform falls into the category of "needle work." However, needle lace -- is a free-standing art using a needle and thread, while embroidery is needle work on a base fabric.

The Fowler Museum was the recipient of the gift of 14 Armenian needle lace doilies from Miss Marie Pilibossian in 1980. This collection was gifted to the Museum with the help of Professor Avedis Sanjian, of the Narekatsi Chair of Armenian Studies.

Patricia Altman, the Curator at the Fowler Museum, acknowledged the gift in a letter dated December 16, 1980 stating: "The Museum is grateful for your objects since we didn't have any Armenian pieces before. Yours are particularly beautiful and we will, I am sure, exhibit them often."

## ՄԵՐ ՆԱԽՆԻՆԵՐԻ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Թինա Դեմերճյան

«Հայկական հագուստ և գեղարվեստական գործվածք» ծրագիր, ԱՄՆ

**Հիմնաբառեր՝** պատմություն, օժիտ, սաղմ, նախնիներ, կանանց պատմություններ, հավաքածու, մոռացված անցյալ, տեքստիլ, ավանդույթ:

Պատմությունը սկսվում է մեզանից որևէ մեկի ծնվելուց շատ առաջ, երբ առաջին անգամ հայտնաբերվեցին թելերը և պատրաստվեց օժիտ: Եթե մենք կարողանայինք հետադարձ հայացք նետել անցյալին, միգուցե կկարողանայինք տեսնել սաղմը, որը սերմանվել է մեր մեջ: Սա այն ճանապարհորդությունն է, որը մենք մեկնարկում ենք՝ գտնելու համար մեր նախնիների և այն կանանց պատմությունները, որոնք մեզ լույս աշխարհ են բերել մեր մայրերի ծնվելուց շատ առաջ: Դա ժանյակի և գործվածքի, հյուսելու և կարելու, ծննդյան, մահվան և վերածննդի պատմություն է:

Armenian Dress & Textile Project (ԱԹՖ) նախագիծը ստեղծվել է 1998թ., Թուրքիայից՝ Կեսարիայից և Ստամբուլից, գաղթած Թեյֆեյան ընտանիքի ճյուղերից մեկին պատկանող 100 տարվա հնության օժիտի և տարազների հայտնաբերումից հետո: Նյու Յորքի հայ ընտանիքների տուտկապ /"բոխչաներում" պահվող նյութական մշակույթի տարրերը վերապրել են 1915 թ. հայոց ցեղասպանությունը, գաղթն ու ժամանակը:

Հավաքածուն բազմաթիվ հայ ընտանիքների մոռացված անցյալի հազվագյուտ ներկայացում է: Յուրաքանչյուր առարկա ունի իր պատմությունը և հիմք է հանդիսանում սոցիալական և մշակութային հարաբերությունների քննարկման համար: ADTP-ն հայ և օտար հանրությանը ծանոթացնում է օժիտի, տեքստիլի և հագուստի հետ՝ որպես ընտանեկան կապերի նույնականացման միջոց: Այն ծանաթացնում է պատմություններին, անեկդոտներին, տեքստիլներին կամ սերնդեսերունդ փոխանցվող այլ իրերին և ծառայում է որպես մշակութային գիտելիքների փոխանակման միջոց:

ADTP-ն պատրաստել է ցուցանմուշներ և շնորհանդեսներ անցկացրել Փասադենայի կենտրոնական գրադարանում գտնվող բժիշկների պատմական տանը՝ CSULA-ում, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանում և Արարատ-Էսքիջյան թանգարանում: Իր ստեղծման և Թեյֆեյան ընտանիքի մյուս ճյուղի երջանիկ վերամիավորման պահից սկսած նախագիծն ընդլայնվել է: Թեյֆեյան ընտանիքի երկու ժառանգներ կյանքի են կոչել երկու հավաքածու, որոնք նոր բացահայտումներ են Կեսարիայում կանանց դերի, ինչպես նաև Նյու Յորք, ապա Կալիֆորնիա գաղթելու մասին: Ընտանեկան կյանքի այս պատմություններն ու ավանդույթները դուրս են գալիս տարածաշրջանից և պատմում այն մասին, թե ինչպես ենք մենք՝ նրանք, ովքեր այժմ ապրում են Սփյուռքում, արձանագրում մեր նախնիների և մեր կյանքը: Ինչպե՞ս արմատավորվենք ինչ-որ տեղ: Ինչ ավանդույթներ ենք մենք պահպանում: Մեր անցյալի ո՞ր օղակներն են կապված մեր ներկա կյանքի հետ: Ինչպե՞ս կարող ենք օգտագործել գոյատևման և գաղթի դասերը՝ մեր ապագայի համար նոր ճանապարհներ ստեղծելու համար:

ADTP-ն եզակի կազմակերպություն է: Այն ծառայում է որպես երկկողմանի հայելի և առաջարկում է հետաքրքիր փորձ՝ իր հայ և օտարազգի լսարանին ամբողջ աշխարհում ներգրավելու համար: Հավաքածուն պահվում է ինչպես ADTP-ում, այնպես էլ Արարատ-Էսքիջյան թանգարանում և ներառում է ասեղնագործ ժանյակի, Այնթապի ասեղնագործության նմուշներ, Ուրֆայի ձեռագործ աշխատանքներ, մետաքսե գորգեր, ասեղնագործ գիշերազգեստներ, մետաք-

սե ծածկոցներ և արևելյան հագուստ, որ կրում էին տղամարդիկ և կանայք, ինչպես նաև 19-րդ դարի էդուարդ թագավորի դարաշրջանի հագուստ և ներքնազգեստ: Ժամանակի ընթացքում իրականացված հետազոտությունների և ցուցահանդեսների միջոցով ADTP-ն պատրաստ է ուսումնասիրել թվային անցուղիները՝ օգտագործելով Պատմվածք, Պոեզիա, հանդիսատեսի հիշողություն և այլ գեղարվեստական միջոցներ՝ անցյալին, հետևաբար նաև մեզ կենդանի շունչ հաղորդելու համար, միաժամանակ առաջարկելով եռաչափ համակարգի ցուցադրման փորձը՝ մեր մշակույթն ու ինքնությունը փոխանցելու համար:

## ПУТЕШЕСТВИЕ НАШИХ ПРЕДКОВ

Тина Демерчян (США)

Проект Armenian Dress & Textile (ADTP)

**Ключевые слова:** история, приданое, семья, предки, женские истории, коллекция, забытое прошлое, текстиль, традиция.

История начинается еще до того, как кто-либо из нас родился, когда впервые были обнаружены нити и предложено приданое. Если бы мы могли заглянуть так далеко в прошлое, возможно, мы бы мельком увидели семья, которое само посеялось в нас. Это путешествие, в которое мы отправляемся, чтобы найти истории наших предков и женщин, которые произвели нас на свет задолго до рождения наших матерей. Это история кружев и тканей, ткачества и шитья, рождения, смерти и возрождения.

Проект Armenian Dress & Textile Project (ADTP) был создан в 1998 году после обнаружения предметов приданого и костюмов 100-летней давности, принадлежащих одной из ветвей семьи Тельфеев из Кесарии и Стамбула, Турция. Материальная культура, хранящаяся в “боксах” армянских семей Нью-Йорка, пережила геноцид армян 1915 года, иностранную миграцию и время.

Коллекция служит редким представлением забытого прошлого многих армянских семей. Каждый предмет имеет свою историю и является основой для обсуждения социальных и культурных отношений. ADTP знакомит армянскую и неармянскую общественность с предметами приданого, текстилем и одеждой/костюмами как средство идентификации семейных связей: историями, анекдотами, текстилем или другими предметами, передаваемыми из поколения в поколение, и служит средством обмена культурными знаниями.

ADTP подготовила экспонаты и провела презентации в историческом Доме врачей, CSULA, в Центральной библиотеке Пасадены, Калифорнийском университете в Лос-Анджелесе и в музее Арарат-Эскиджян. С момента своего создания и счастливого воссоединения другой ветви семьи Тельфеев, проект расширился. Два потомка семьи Тельфеев воплотили в жизнь две коллекции, которые побудили к новым откровениям о роли женщин в Кесарии, а также о миграции в Нью-Йорк, а затем в Калифорнию. Эти истории и традиции семейной жизни выходят за рамки региона и рассказывают о том, как мы - те, кто сейчас живет в диаспоре - записываем жизнь наших предков и нашу жизнь. Как нам пустить корни в каком-то месте? Какие традиции мы соблюдаем? Какие звенья нашего прошлого связаны с нашей нынешней жизнью? Как мы можем использовать уроки выживания и миграции, чтобы проложить новые дороги для нашего будущего?

ADTP- это уникальная организация, которая служит двусторонним зеркалом и предлагает захватывающий опыт для привлечения своей армянской и неармянской аудитории по всему миру. Коллекция хранится как в ADTP, так и в музее Арарат-Эскиджян и включает в себя игольное кружево, образцы вышивки Айнтапа, изделия ручной работы из Урфы, шелковые ковры, вышитые ночные рубашки, шелковые покрывала и восточные костюмы, которые носили мужчины и женщины, а также костюмы и нижнее белье 19-го века эпохи короля Эдуарда. Благодаря исследованиям, разработкам и выставкам, создаваемым с течением времени, ADTP готова исследовать цифровые переходы, используя повествование, поэзию, память зрителей и другие художественные средства для передачи прошлого, вдыхая в него жизнь, а следовательно, и в нас самих, предлагая опыт демонстрации трехмерной системой, чтобы поделиться нашей культурой и идентичностью.

## THE JOURNEY OF OUR ANCESTORS

Tina Demerchian (USA)

The Armenian Dress & Textile Project (ADTP)

**Key words:** history, dowry, seed, ancestors, women stories, collection, forgotten past, textile, tradition:

The story begins before any of us were born, when thread was first discovered and dowries were offered. If we could reach that far back perhaps we would glimpse the seed that sowed itself into us. This is the journey we take to find the stories of our ancestors, and of the women who birthed us long before our mothers were born. It is the story of lace and cloth, of weaving and sewing, of birth, death, and rebirth.

The Armenian Dress & Textile Project (ADTP) began in 1998 after the discovery of 100-year-old dowry items and costumes belonging to one branch of the Telfeyan family from Caesarea/Kesaria and Istanbul, Turkey. The material culture stored in numerous “bokhjas” in New York had survived the Armenian Genocide of 1915, overseas migration, and time.

The collection serves as a rare representation of a forgotten past of many Armenian families. Each item has a story, a history and is a lens to discuss social and cultural attitudes. ADTP exposes the Armenian and non-Armenian public to the dowry items, textiles, and clothing/costumes as a means to identify one's family ties: stories, anecdotes, and textiles or other items passed on through the generations, and to serve as a conduit to exchange cultural knowledge.

ADTP produced exhibits and gave presentations at the historic Doctors' House, CSULA, Pasadena Central Library, UCLA, and the Ararat-Eskijian Museum. Since its inception and a serendipitous reunion of the other branch of the Telfeyan family, the project grew. The two descendants of the Telfeyan family brought two collections to life that prompted new revelations of the role of women in Kesaria, and the journey and overseas migration to New York and later to California. These stories and traditions of family life extend beyond a region and delves into how we—who now live in the diaspora—record the life of our ancestors and ourselves. How do we settle roots in a place? What traditions do we keep? What links of our past are connected to our present life? How do we harness lessons of survival and migration to pave new roads for our future?

ADTP is now in a unique position to serve as a two-way mirror, and to offer immersive experiences to engage its audiences globally, Armenian and non-Armenian. The collection is housed both with ADTP and at the Ararat-Eskijian Museum and includes needle lace, Aintab tel kash, Urfa handiwork, silk rugs, embellished nightgowns, silk bedspreads, and eastern costumes worn by men and women, and 19th century Edwardian costumes and undergarments. Through research, development, and exhibits produced over time that ADTP is ready to explore digital walk-throughs using storytelling, poetry, the viewers' memory, and other artistic renderings to communicate the past by breathing life into it, and therefore into ourselves, offering a three-dimensional experience to be shared about our culture and our identity.

**ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՓՅՈՒՌԻ  
ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ**

Միհրան Գալստյան  
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
բաժնի վարիչ, պ.գ.դ.  
akoonk@yahoo.com

**Հիմնաբառեր՝** մշակույթ, ինքնություն, Սփյուռք, միգրանտ, հետխորհրդային, բազամշակութայնության կրող, սոցիալական ցանց

Սփյուռքին վերաբերող գրականության մեջ զրհի կարգավիճակում հայտնված էթնիկ այն խմբերը, որոնք բռնի տեղահանվել են իրենց հայրենիքից, հիշատակվում են «ավանդական», «դասական» կամ «պատմական» սփյուռք: Որպես այդպիսիք՝ առաջին հերթին նշվում են հայերը, հրեաները, հույները: Դասական սփյուռքի հայեցակարգը կառուցված է էթնիկ պատկանելության, բռնի տեղահանման, ինչպես նաև հայրենիքի նկատմամբ կողմնորոշման շուրջ: Այն հետազոտողների կողմից համակողմանիորեն ուսումնասիրված թեմաներից է, մինչդեռ նույնը չենք կարող նշել հետխորհրդային Հայաստանից արտագաղթի հետևանքով արտերկրում ձևավորված ժամանակակից սփյուռքի մասին: Խ. Թոլոյանը, զուգահեռներ անցկացնելով «սփյուռք» հասկացության նախկին և ներկա բովանդակային ըմբռնումների միջև, նշում է, որ ներկայումս այդ հասկացությունն ունի ավելի լայն իմաստ և ընդգրկում է նաև «ներգաղթյալ», «հայրենիքից վտարված», «փախստական», «աշխատանքային միգրանտ», «աքսորված համայնք», «էթնիկ համայնք» և այլ կատեգորիաներ: Այդ խմբերի նկատմամբ նա կիրառում է «անդրազգային» տերմինը, քանի որ նրանք դեռևս «սփյուռքահայեր չեն» և սերտորեն կապված են Հայաստանի հետ: Անդրմիգրանտը միաժամանակ ապրում և ներառվում է մի քանի հասարակությունում, ձևավորում է նոր սոցիալական հարաբերություններ, բայց միաժամանակ շարունակելով գործել իր ծագման երկրի հասարակության սոցիալական ցանցերում: Այս բոլորը հանգեցնում է նրան, որ միգրանտները, սոցիալական ցանցի միջոցով գտնվելով մեկից ավելի հասարակություններում, ձևավորում են նոր անդրմշակութային տարածք՝ դառնալով բազամշակութայնության կրող: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հետխորհրդային Հայաստանից արտագաղթած միգրանտները, բնակություն հաստատելով արտերկրում և տեղափոխվելով մի մշակույթից մեկ այլ մշակութային տարածք, ոչ թե մոռանում են իրենցը և յուրացնում նորը, այլ տիրապետում են մեկից ավելի մշակույթների: Հետազոտությամբ նաև պարզվեց, որ Հայաստանի հետ ունեցած սերտ կապերի և ընդունող հասարակության մշակույ-

թի պրակտիկաների յուրացման հիման վրա ձևավորվում է ինքնատիպ մշակույթ, որը կարելի է անվանել խառնուրդ մշակույթ: Միաժամանակ գտնվելով մեկից ավելի հասարակությունների սոցիալական հարաբերություններում՝ այդ միգրանտների մեջ ձևավորվում է նաև անդրազգային գիտակցություն, և նրանք դառնում են մի քանի ինքնության կրող: Հոդվածը հիմնված է 2021 թ. Հայաստանի բոլոր մարզերի 20 քաղաքային, 37 գյուղական բնակավայրերում և Երևան քաղաքում հարցաթերթային հարցման միջոցով 639 ընտանիքների վերաբերյալ հավաքված տեղեկատվության վրա, որոնց անդամներից 1259-ը արտագաղթել և բնակություն է հաստատել արտերկրում:

## ПРОБЛЕМЫ КУЛЬТУРЫ И ИДЕНТИЧНОСТИ СРЕДИ ТРАНСНАЦИОНАЛЬНЫХ МИГРАНТОВ ДИАСПОРЫ

Мигран Галстян

Институт археологии и этнографии НАН РА,

зав. отделом, д.и.н.

akoonk@yahoo.com

**Ключевые слова:** культура, идентичность, Диаспора, мигрант, постсоветский, носитель мультикультурализма, социальная сеть

В литературе, относящейся к Диаспоре, оказавшиеся в статусе жертвы этнические группы, которые насильно были депортированы из своей родины, упоминаются как “традиционная”, “классическая” или “историческая” диаспора. В качестве таковой в первую очередь указываются армяне, евреи, греки. Концепция классической диаспоры создана вокруг понятий этнической принадлежности, насильственной депортации, а также ориентации в отношении родины. Она является темой всестороннего изучения исследователями, между тем, как то же самое не можем отметить о современной Диаспоре, сформировавшейся за рубежом вследствие эмиграции из постсоветской Армении. Х. Тололян, проводя параллели между восприятием прежнего и настоящего содержания понятия “диаспора”, отмечает, что в настоящее время это понятие имеет более широкий смысл и охватывает также категории “иммигрант”, “изгнанный из родины”, “беженец”, “трудоустроенный мигрант”, “сосланная община”, “этническая община” и другие категории. К этим группам он применяет термин “транснациональные”, так как они еще не являются “армянами Диаспоры” и тесно связаны с Арменией. Трансмигрант одновременно проживает в нескольких сообществах и включен в них, формирует новые социальные отношения, но одновременно продолжает действовать в социальных сетях сообщества страны своего происхождения. Все это приводит к тому, что мигранты, находясь через посредство социальной сети в нескольких сообществах, формируют новую транскультурную территорию, становясь носителями мультикультурализма. Результаты исследования показывают, что эмигрировавшие из постсоветской Армении мигранты, обосновавшись на проживание за рубежом и переместившись из одной культурной территории в другую культурную территорию, не только не забывают свою и воспринимают новую культуру, но и овладевают более чем одной культурой. Исследованием также выяснилось, что на основе имеющихся тесных связей с Арменией и усвоением культурной практики принимающего сообщества формируется самобытная культура, которую можно назвать смешанной культурой. При нахождении одновременно в сфере социаль-

ных отношений нескольких сообществ среди этих мигрантов формируется также транснациональное сознание и они становятся носителями нескольких идентичностей.

Статья основана на информации, собраной в 2021 году в 20 городских, 37 сельских населенных пунктах всех областей Армении и городе Ереване посредством анкетного опроса относительно 639 семей, 1259 лиц из которых эмигрировали и обосновались на проживание в зарубежных странах.

## CULTURE AND IDENTITY ISSUES AMONG TRANSNATIONAL MIGRANTS OF DIASPORA

Mihran Galstyan

Leading Scholar, Head of Department of the  
Ethnosociology Institute of Archaeology and Ethnography of NAS RA,  
Doctor of Historical Sciences  
akoonk@yahoo.com

**Key words:** culture, **identity**, Diaspora, **migrant**, post-Soviet, carrier of multicultural practices, social network

In the diaspora literature, victimized ethnic groups that have been forcibly displaced from their homelands are referred to as “traditional,” “classical,” or “historical” diasporas. As such, Armenians, Jews, and Greeks are mentioned first. The classic concept of the diaspora is built around ethnicity, forced displacement, and orientation to the homeland. It is one of the topics comprehensively studied by researchers. At the same time, the same cannot be said about the modern diaspora formed abroad due to emigration from post-Soviet Armenia. Kh. Tölölyan, drawing parallels between the previous and current substantive understandings of the concept of “diaspora,” notes that currently, this concept has a broader meaning and includes “immigrant,” “expelled from the homeland,” “refugee,” “labor migrant,” “exiled community,” “ethnic community” and other categories. He applies the “transnational” term to these groups because they are not yet “diaspora Armenians” and are closely related to Armenia. Transmigrant lives and participates in several communities simultaneously, forming new social relations and intending to act in the social networks of his/her country of origin. As a result, migrants, being in more than one society through the social network, form a new transcultural space, becoming a carrier of multicultural practices. The research results show that migrants who emigrated from post-Soviet Armenia, settling abroad and moving from one culture to another cultural area, do not forget their own and do not assimilate into a new one but master more than one culture. The research also revealed that an original culture is formed based on the close ties with Armenia and the adoption of the cultural practices of the host society, which can be called a mixed culture. As these migrants live in the social relations of more than one society simultaneously, they also form transnational consciousness and become bearers of several identities.

This research was conducted in 2021 based on the information collected through a quantitative survey among 639 families in 20 urban and 37 rural settlements of all regions of Armenia and Yerevan, where 1259 family members emigrated and settled abroad.



**ՀՆԴԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Ռուբեն Օհանջանյան  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
գիտաշխատող, պ.գ.թ.

**Հիմնաբաներ**<sup>1</sup> էթնիկ արժեքներ, գաղթօջախ, համայնք, ինստիտուցիոնալ կառույց, կեն-  
ցաղամշակութային կյանք, մշակութային արժեքների տարածման ուղիներ, հավաքված նյութե-  
րի ներկայացուցչականություն, համացանցային ուսումնասիրության մեթոդներ:

Հնդկական դարավոր կապերի վերաբերյալ գոյություն ունեն բավականին հարուստ պատմագիտական ուսումնասիրություններ, որոնցում մանրամասն ներկայացվել է Հնդկաստա-  
նում հայ գաղթօջախի ձևավորման և ծաղկման գործընթացը: Արժևորվել է հնդկահայ համայն-  
քի դերը հայ մշակույթի զարգացման գործում: Արդի պայմաններում ստվարացել է հնդիկ  
բնակչության թվաքանակը ՀՀ-ում, որի սոցիալական և կենցաղամշակութային կյանքի վերա-  
բերյալ համացանցում առկա են բազմաթիվ նյութեր: Այդուհանդերձ, հարկ է իրականացնել  
նաև գիտական համակարգված ուսումնասիրություններ, որոնք հնարավորություն կընձեռեն  
բացահայտելու հնդկական համայնքի առջև ծառայած խնդրահարույց հարցերը: Հայ-հնդկա-  
կան փոխհարաբերության ոլորտները բազմաբնույթ են՝ քաղաքական, ռազմական, տնտեսա-  
կան, մշակութային, որոնք իրականացնում են պետական ինստիտուցիոնալ կառույցները: Սա-  
կայն, սույն հրապարակման նպատակն է լինելու բացահայտել հնդկական համայնքի ազդե-  
ցության շրջանակները ՀՀ կենցաղամշակութային կյանքում: Հետազոտության մեթոդների  
թվում կիրառվել են համացանցային նյութերը և հարցազրույցները: Հավաքված նյութերն ողջ  
հնդկական համայնքի մասշտաբով ներկայացուցչական չեն, սակայն ուրվագծում են ուսումնա-  
սիրության ենթակա որոշ հարցերի շրջանակներ և կարող են նպաստել հետագա հիմնարար  
հետազոտությունների ձեռնարկմանը:

Հնդիկները մեծապես նպաստում են ՀՀ սոցիալ-տնտեսական կյանքի զարգացմանը՝ ընդ-  
գրկված լինելով բազմաթիվ ոլորտներում՝ կրթություն, բժշկություն, գյուղատնտեսություն,  
տրանսպորտային ծառայություն, շինարարություն, առևտուր, սպասարկում և այլն: Այդուհան-  
դերձ, այդ զբաղմունքների հիմնական մասն էթիկ արժեքների տարածման գործառույթներ չի  
կատարում: Մեր հիմնական նպատակն էր՝ բացահայտել, թե հնդկական ազգային ինչպիսի  
արժեքներ են տարածվում հայ բնակչության շրջանում: Դրանց տարածումը կարող է իրակա-  
նացվել զանազան ուղիներով, սակայն սույն հետազոտության հնարավորությունների սահման-  
ներում տարածման ուղիներից ընտրվել են հնդկական սննդի օբյեկտների, պարենային և տն-  
տեսական խանութների ապրանքատեսակների սպառման խնդիրները հայ ազգաբնակչության  
շրջանում:

Սննդի օբյեկտները նախատեսված են հիմնականում հնդիկ բնակչությանը սպասարկելու  
համար: Որոշ սննդի օբյեկտներում չեն օգտագործում տավարի և խոզի միս, այնուամենայնիվ  
հայերը նույնպես նախընտրում են հնդկական օբյեկտների ճաշացանկը՝ անգամ առաքման  
տարբերակով: Հնդկական սննդի խանութներում հայերի շրջանում առավել մեծ պահանջարկ  
են վայելում համեմունքները, հատկապես՝ պղպեղները: Արդյունաբերական ապրանքատեսակ-  
ներն առավել գրավիչ են հայ կանանց համար, որոնք գնում են հնդկական բուրավետ փայտիկ-  
ներ, բուրավետ յուղեր, աչքի ծարիր (աչքի սյուրմա), նաև զարդեր, քանի որ սիրում են նրանց  
մշակույթը և ոճը:

## СОЦИОКУЛЬТУРНОЕ ВЛИЯНИЕ ИНДИЙСКОЙ ОБЩИНЫ В АРМЕНИИ

Рубен Оганджян

Институт археологии и этнографии НАН РА,  
научный сотрудник, к.и.н.

**Ключевые слова:** этнические ценности, диаспора, община, институциональные структуры, культурно-бытовая жизнь, каналы распространения культурных ценностей, репрезентативность собранных материалов, методы изучения в социальной сети.

Имеются богатые исторические исследования, посвященные многовековым связям между армянами и индийцами, которые всесторонне описывают становление и развитие армянской общины в Индии. Высоко оценена роль индийско-армянской общины в развитии армянской культуры. В настоящее время численность индийского населения в Республике Армения уменьшилась. В интернете есть различные материалы, посвященные социальной и бытовой культуре индийской общины в Армении, однако необходимо дополнительно провести скоординированные научные исследования, которые помогут нам разобраться, с какими проблемами сегодня сталкивается индийская община. Сферы взаимодействия между армянами и индийцами разнообразны – политическая, военная, экономическая, культурная. За ними следят государственные органы. Тем не менее, целью данной публикации является выявление масштабов влияния индийской общины на отечественную культуру в Республике Армения. Среди методов этого исследования – онлайн-исследования и интервью. Собранные материалы не являются репрезентативными для индийской общины, но тем не менее очерчивают круг некоторых вопросов, подлежащих изучению, и могут побудить к дальнейшим фундаментальным исследованиям.

Индийцы в основном влияют на развитие социально-экономической жизни Республики Армения, занимаясь рядом сфер – образованием, медициной, сельским хозяйством, транспортом, строительством, торговлей, обслуживанием и т. Д. Однако, распространение этических ценностей не входит в число функций большинства упомянутых сфер. Нашей основной целью было выяснить, какие именно индийские национальные ценности распространяются среди армянского населения. Несмотря на то, что эти ценности могут распространяться по-разному, мы выбрали для их изучения потребление индийских товаров армянами в заведениях общественного питания, продуктовых магазинах и рынках. Объекты общественного питания и напитков в основном предназначены для для индийского населения. Некоторые из этих объектов не используют говядину и свинину. Тем не менее, армяне тоже предпочитают индийскую еду даже через доставку. В индийских продуктовых магазинах армяне обычно потребляют специи, особенно перец. Шопинг и товары повседневного спроса распространены среди армянских женщин, которые покупают индийские ароматические палочки, парфюмерные масла, индийский каял (черная подводка для глаз), а также украшения, поскольку им нравится индийская культура и стиль.

## THE SOCIO-CULTURAL INFLUENCES OF THE INDIAN COMMUNITY IN ARMENIA

Ruben Ohanjanyan  
Institute of Archaeology and Ethnography,  
NAS RA, Senior Researcher, Ph.D.

**Key words:** ethnic values, diaspora, ethnic community, institutional structure, domestic life, dissemination of cultural values, representativeness of collected data, online research methods.

There are rich historical studies dedicated to the centuries of connections between Armenians and Indians that comprehensively describe the formation and the development of the Armenian community in India. Valued has been the Indian-Armenian community's role in the development of the Armenian culture. Nowadays, the number of Indian population in the Republic of Armenia has decreased. There are various materials dedicated to the Indian community's social and domestic culture in Armenia online, however, it is necessary to additionally conduct coordinated scientific studies that will help us unravel what issues the Indian community faces today. The fields of interaction between Armenians and Indians are diverse-political, military, economic, cultural. These are overseen by state institutions. Nevertheless, the objective of this publication is to reveal the scopes of the Indian community's influence on the domestic culture in the Republic of Armenia. Among the methods of this research are the online research and interviews. The collected materials are not representative for the Indian community, and yet they outline the scopes of certain questions subject to study and can provoke further fundamental researches.

For the most part, Indians influence the development of the socio-economic life of the Republic of Armenia by being engaged in a number of fields-education, medicine, agriculture, transportation, construction, trade, service, and etc. However, spreading ethical values isn't among the functionalities of the majority of the fields mentioned. Our primary objective has been to discover what specific Indian national values are being spread across the Armenian population. Despite those values can be spread in a number of ways, we have selected to study them through the consumption of Indian goods by Armenians in food and beverage service facilities, food and department stores. Food and beverage service facilities are mainly intended for the Indian population. Some of those facilities don't use beef and pork. Even so, Armenians, too, prefer Indian food even via delivery. At Indian food stores Armenians usually consume spices- especially peppers. Shopping and convenience goods are common among the Armenian women who buy Indian incense sticks, perfume oils, Indian Kayal (black eyeliner), also jewelry as they like Indian culture and style.

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Ռուբեն Կարապետյան  
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Սփյուռքի ուսումնասիրությունների  
բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր  
karapetyan.ruben.s@gmail.com

**Հիմնաբառեր**՝ ինքնություն, պատմական հիշողություն, անցյալի գործիչներ, ընտրողականություն, սփյուռք, ինքնանույնականացում, սոցիալական խմբեր, ինքնակարծրատիպեր:

Էթնիկ ինքնության հիմնական բաղադրիչներից մեկը պատմական հիշողությունն է: Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունեն անհատի գիտակցության մեջ սեփական էթնիկ խմբի պատմական անցյալի իրադարձությունների ներթափանցման և այդ անցյալի հետ նրա ինքնանույնականացման ուղիները: Հիմնվելով ինը քաղաքների (Երևան, Թեհրան, Բեյրութ, Լոս Անջելես, Փարիզ, Լիոն, Մարսել, Թբիլիսի և Պրահա) հայերի շրջանում իրականացված հետազոտությունների նյութերի վրա՝ զեկույցում վերլուծվում են անցյալի իրադարձությունների և գործիչների ընտրության մեխանիզմները: Դիտարկվում է անցյալի իրադարձությունների և գործիչների նկատմամբ հարցվողների ընտրողական վերաբերմունքի հարաբերակցությունը՝ կապված քաղաքական, սոցիալական և մշակութային բնույթի ժամանակակից խնդիրների հետ: Ներկայացվում է անցյալի իրադարձության և գործիչի ընտրությունը տարբեր սերունդների, սեփական և այլազգ միջավայրերում հաստատված հայերի սոցիալական խմբերի կողմից՝ ինքնակարծրատիպերի և անցյալի տարբեր ժամանակային հատվածների գնահատականների համատեքստում՝ դրանք պայմանավորող տարբեր գործոններով:

Զեկույցի ներկայացված տեսանկյունը և կոնկրետ էմպիրիկ նյութի վերլուծությունը թույլ է տալիս նորովի դիտարկել էթնոսի տարբեր շերտերի ու հատվածների ներկայացուցիչների կողմից պատմական անցյալի իրադարձությունների և գործիչների կերպարի գնահատականների ձևավորման մեխանիզմները:

## ИСТОРИЧЕСКАЯ ПАМЯТЬ И ИДЕНТИЧНОСТЬ В ДИАСПОРЕ

Рубен Карапетян  
Институт археологии и этнографии НАН РА,  
заведующий отделом исследований диаспоры, д.и.н.  
karapetyan.ruben.s@gmail.com

**Ключевые слова:** идентичность, историческая память, деятели прошлого, избирательность, диаспора, самоидентификация, социальные группы, автостереотипы

Одной из основных составляющих этнической идентичности является историческая память. В этой связи особое значение приобретают пути инфильтрации событий исторического прошлого своего этноса в сознании личности и ее самоидентификации с этим прошлым. В докладе на основе материалов исследований армян-жителей девяти городов (Еревана, Тегерана, Бейрута, Лос-Анджелеса, Парижа, Лиона, Марселя, Тбилиси и Праги) анализируются механизмы

их селективного отношения к событиям и деятелям прошлого. Рассматривается соотносимость избирательного отношения респондентов к событиям и деятелям прошлого с современными проблемами политического социального и культурного характера. Выбор события и деятеля прошлого различными поколениями, социальными группами армян, расселенных в своей и интернациональной среде представлен в контексте автостереотипов и оценок разных временных срезов прошлого в факторах их обуславливающих.

Представленный ракурс доклада, данный в нем анализ конкретного эмпирического материала, позволяет по новому рассмотреть механизмы формирования оценок событий исторического прошлого, образа его деятелей у представителей разных слоев и частей этноса.

## HISTORICAL MEMORY AND IDENTITY IN THE DIASPORA

Ruben Karapetyan

Head of Department of Diaspora Studies,  
IAE NAS RA, Doctor of Historical Sciences  
karapetyan.ruben.s@gmail.com

**Key words:** identity, historical memory, figures of the past, selectivity, diaspora, self-identification, social groups, auto-stereotypes:

One of the main components of ethnic identity is historical memory. In this regard, the ways of infiltrating the events of their ethnic group's historical past in the minds of individuals and their self-identification with this past acquire special significance. In the report the mechanisms of selective attitude towards the events and figures of the past are analyzed on the basis of the study of Armenian residents of nine cities (Yerevan, Tehran, Beirut, Los Angeles, Paris, Lyon, Marseilles, Tbilisi and Prague). The correlation of the respondents' selective attitude towards the events and figures of the past with contemporary problems of political social and cultural character is considered. The choice of the event and figure of the past by different generations, social groups of Armenians, settled in their own and foreign environments is presented in the context of auto-stereotypes and evaluation of different aspects of the past in the factors, which condition them.

The presented perspective of the report and its analysis of specific empirical material allows us to take a fresh look at the mechanisms of shaping the assessments of the events of the historical past and the images of its figures by representatives of different strata and parts of the ethnic group.

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ  
ՍՓՅՈՒՌՔ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

Աշոտ Ավետիսյան  
Ինտերնետային ՓԲԸ խորհրդի անդամ, տ.գ.թ.  
ashot.avetisyan.1949@mail.ru

**Հիմնաբաներ**՝ կազմակերպություն, մասնագետներ, ռազմարդյունաբերական համալիր, տեխնոլոգիաներ, համալիր, սփյուռք, նախագիծ:

Ներկայումս ծայրահեղ արդիական է դառնում Սփյուռքի ձեռնարկատիրական ներուժի բացահայտման և օգտագործման պետական ծրագրի մշակման և իրականացման խնդիրը Հայաստանի տնտեսական զարգացման և անվտանգության ապահովման գործում: Զեկուցման նպատակն է վերհանել որոշ մեխանիզմներ, որոնք կնպաստեն ՀՀ տնտեսական զարգացմանը ընդհանուր ծրագրի միջոցով: Նշված ծրագիրը պետք է բաղկացած լինի նախագծային և կազմակերպչական բաղադրիչներից: Նախագծային մասը պետք է ներառի մի շարք խոշոր ռազմավարական նախագծերից ռազմարդյունաբերական համալիրի (ռազմարդյունաբերական համալիր) և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում:

Ծրագրի կազմակերպչական բաղադրիչը պետք է ներառի հանրապետության բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգում նշված նախագծերին համապատասխան բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման պետպատվեր, ինչպես նաև համապատասխան կիրառական գիտահետազոտական և ենթակառուցվածքային ենթածրագրերի ֆինանսավորում:

Կազմակերպչական բաղադրիչը պետք է ներառի նաև միջոցառումների համալիր՝ նախագծերին առնչվող գործունեության ոլորտներում Սփյուռքի մասնագետների տվյալների բազա ստեղծելու համար: Ծրագրի կազմակերպչական և ֆինանսական բաղադրիչը պետք է ներառի ծրագրերի իրականացման համար ԲԲԸ-ների (բաց բաժնետիրական ընկերությունների) ստեղծման միջոցառումների շարք:

Առաջարկվող մոդելի իրականացումը ինստիտուցիոնալ շրջանակ կստեղծի Հայաստանի ռազմավարական զարգացման համար: Սույն զեկուցումը հիմնված է ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ թիվ 21T-5B168 գիտական նախագծի շրջանակներում իրականացված հետազոտության վրա:

**ГОСПРОГРАММА: Э  
КОНОМИЧЕСКОЕ РАЗВИТИЕ И ДИАСПОРА**

Ашот Аветисян  
Член правления ЗАО «Инекобанк», к.э.н.  
ashot.avetisyan.1949@mail.ru

**Ключевые слова:** организация, специалисты, военно-промышленный комплекс, технологии, комплекс, диаспора, проект.

В настоящее время чрезвычайно актуальной становится проблема разработки и реализации государственной программы по выявлению и задействованию предпринимательского по-

тенциала диаспоры в экономическом развитии и безопасности Армении. Цель доклада – определить некоторые механизмы, которые будут способствовать экономическому развитию РА через общую программу. Указанная программа должна состоять из проектной и организационной составляющих. Проектная часть должна включать в себя ряд крупных стратегических проектов в сферах ВПК (военно-промышленного комплекса) и высоких технологий.

Организационная составляющая программы должна включать в себя госзаказ на подготовку соответствующих этим проектам высококлассных специалистов в системе высшего и профтехнического образования в республике, а также финансирование соответствующих прикладных научных исследований и инфраструктурных подпроектов.

Организационная составляющая должна включать в себя также комплекс мероприятий по созданию базы данных о видных профессионалах в диаспоре в соответствующих проектах сферах деятельности. Организационно-финансовая составляющая программы должна охватывать комплекс мероприятий по созданию ОАО (открытых акционерных обществ) по реализации проектов. Реализация предложенной модели создаст институциональную основу для стратегического развития Армении. Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке МОНКС РА в рамках научного проекта № 21Т-5В168.

## **STATE PROGRAM: ECONOMIC DEVELOPMENT AND THE DIASPORA**

Ashot Avetisyan  
Member of the Executive Board of  
"Inecobank" CJSC, Ph.D in Economics  
ashot.avetisyan.1949@mail.ru

**Key words:** organization, specialists, military-industrial complex, technologies, complex, diaspora, project

At present, the problem of developing and implementing a state program to identify and use the entrepreneurial potential of the diaspora in the economic development and security of Armenia is becoming extremely urgent. The purpose of the report is to identify some mechanisms that will contribute to the economic development of RA through a common program. The specified program should consist of design and organizational components. The project part should include a number of large strategic projects in the areas of the military-industrial complex (military-industrial complex) and high technologies.

The organizational component of the program should include a state order for the training of highly qualified specialists corresponding to these projects in the system of higher and vocational education in the republic, as well as funding for relevant applied scientific research and infrastructure subprojects.

The organizational component should also include a set of measures to create a database of prominent professionals in the Diaspora in the areas of activity relevant to the projects. The organizational and financial component of the program should cover a set of measures for the creation of JSCs (open joint stock companies) for the implementation of projects.

The implementation of the proposed model will create an institutional framework for the strategic development of Armenia. The study was carried out with the financial support of the Committee on Science of the Ministry of Education and Science of the Republic of Armenia within the framework of the scientific project No. 21T-5B168.

## ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

Սյուզաննա Բարսեղյան  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
Սփյուռքի հետազոտությունների բաժին, ավագ գիտաշխատող, պ.գ.թ.  
syuzanna.barseghyan@gmail.com

**Հիմնաբաներ**<sup>1</sup> հայրենիք, սփյուռք, սփյուռքյան ինքնություն, պատկերացումներ, գործոններ, միջավայր, գործընթաց

Հայրենիքի մասին պատկերացումները տարբեր են բազմաշերտ ու բազմազան արդի հայկական սփյուռքում: Սփյուռքահայերը կարող են հայրենիք համարել իրենց կամ ծնողների/նախնիների ծննդավայրը, ծագման երկիրը, բնակության երկիրը, պատմական հայրենիքը, Հայաստանի Հանրապետությունը և այլն: Հայրենիքի ընկալումների վրա ազդում են բազմաթիվ գործոններ. դրանք կարող են լինել ինչպես սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները, այնպես էլ ցրման սկզբնական վայրը, գաղթի պատճառն ու պատմությունը, սերնդափոխությունը, ընդունող երկրի գերիշխող մշակույթն ու միջավայրը, համայնքային կառուցվածքը, կապը Հայաստանի հետ և այլն: Սփյուռքացման գործընթացում, ամենօրյա պրակտիկաներում և դիսկուրսիվ դաշտերում տարածվում և վերարտադրվում են հայրենիքի մասին պատկերացումները, որոնք նույնքան բազմազան են, որքան սփյուռքյան իրականությունը: Այս բազմազանության և տարբերությունների մեջ վերարտադրվում և փոխանցվում է «կորուսյալ ծագման» և «հիշվող կամ երևակայվող հայրենիքի» գաղափարը: Սակայն ինչպիսին էլ լինի հայրենիքի ընկալումը, այն հանդես է գալիս որպես ինքնության կարևոր աղբյուր:

Ներկայացվող զեկուցման նպատակն է վերլուծել հայրենիքի դերը սփյուռքյան ինքնության կառուցակցման գործում, բացահայտել արդի հայկական սփյուռքում հայրենիքին վերագրվող նշանակությունն ու նրա հետ կապի առանձնահատկությունը:

Վերլուծության հիմքում ընկած հետազոտությունն իրականացվել է արդի հայկական սփյուռքի մի շարք համայնքներում՝ ձևայնացված հարցումների, խորին հարցազրույցների և դիտման մեթոդներով<sup>1</sup>: Վերլուծությունը հենվում է նաև սփյուռքյան մամուլի և երկրորդային տվյալների վրա:

---

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի կողմից, «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» պետական նպատակային ծրագրի շրջանակներում:



## РОДИНА И ДИАСПОРАЛЬНАЯ ИДЕНТИЧНОСТЬ

Сюзанна Барсегиан

Институт археологии и этнографии НАН РА,  
Отдел исследований диаспоры, старший научный сотрудник, к.и.н.  
syuzanna.barseghyan@gmail.com

**Ключевые слова:** родина, диаспора, диаспоральная идентичность, представления, факторы, среда, процесс

